№ 237 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 21 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆօն № 2—53.

1914
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 21 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ № 237

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—3
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տելեֆօն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
Соломоновская ул., № 21.
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 2 ՌՈՒԲ.

Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պէտք վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԹԻՖԼԻՍԻ ԲԱՂԱՔԱԳԼՈՒԽԸ

յայտնում է Թիֆլիսի հասարակութեանը, որ այսօր, հոկտեմբերի 21-ին, ցերեկվայ ժամը 12-ին, Երեւանեան հրապարակի վրա կը կատարվի համաժողովրդական մաղթանք Թիւրքիայի դէմ Կովկասում սկսված պատերազմական գործողութիւնների առիթով։

ՊՕՐՏԼԱՆԴ-ՑԵՄԵՆՏ ԵՒ ՇԻՆՈՒԹԵԱՆ ԱՅԼ ՆԻՒԹԵՐ ԱՐՏԱԴՐՈՂ

„ԹԱՈՒԶ" ԱԿՑ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

բացել է իր գործունէութիւնը. պատրաստում է ցեմենտ թէ շինութիւնների համար և թէ ածելու (заливочный, тампотажный)։

Իր որակով ցեմենտը գերազանցում է Ճանապարհների Հաղորդակցութեան Մինիստրութիւնից հաստատված չափից։

Պատուէրները և այլ հարցերը պէտք է ուղղել գլխաւոր գրասենեակին, որ գտնվում է՝ Թիֆլիս Սերգիէվսկայա փ. № 15. Հեռախօս № 99.

Գործարանը գտնվում է Գանձակի նահանգի Ղազախի գաւառում, երկաթուղու Թաուզ կայարանի մօտ։

տռ. (Ե. Հ. 2.) 940. 10—2

ԴԱՍԵՐ

ֆրանսերէնի և հայերէնի, լեզու և գրականութիւն։

Դիմել՝ առ. ժ. 9—$11^{1}/_{2}$, եր. 5—7. Большая Ванкская ул., № 10.

ԲԺԻՇԿ

Շուշանիկ Նաքարեան

(Մասնագէտ կանանց հիւանդութիւնների եւ մանկաբարձութեան)։

Ընդունում է հիւանդներին՝ (առ. ժ. $12^{1}/_{2}$—2. (եր. ժ. 4—6.

Հասցէն՝ Սօլօլակ, Բոխչեվսկայա փ. № 1. Հեռախօս 10—58.

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Ս. Գ. ԿԷՕՆՋԵԱՆ

վերադառնալով վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը. պլոմբ, արհեստական ատամներ, ատամի հեռացումը առանց ցաւի։

Ընդունելութիւնը ամենայն օր.
Առաւ. 9—2 ժ.
Երեկ. 4—7 ժ.
Կիրակի օրերը 10—12.
Լերմօնտովսկայա փողոց № 1. մուտքը Նոբրաֆողոցից։
տռ. (ա. օ.) Ո—41 804.

ԿԱՏԱՐՎԵՑ

—

Կատարվեց այն, ինչ որ անձկալին էր, սրտատրոփ սպասվում էր։

Մեծն և հզօր Ռուսաստանը, չը կարողանալով այլ ևս տանել Թիւրքաց կառավարութեան տմարդի վարմունքը, նրա դաւադրական յարձակումը և նրա ամբարտաւան արարքները, որոշեց զէնքի դիմել՝ ամբարտաւան Թիւրքերին պատժելու և զսպելու համար։

Բարձրագոյն կամքով Կովկասի փոխարքան հրամայեց կովկասեան զօրքերին անցնել սահմանը և յարձակումն գործել Թիւրքիայի վրա։

Մինչև այժմ պատերազմի թատերաբեմը հեռու էր մեզանից, Կովկասից. այժմ պատերազմի թատերաբեմ է դառնում Թիւրքաց Հայաստանը, թատերաբեմ կը դառնայ հաւանօրէն և Ատրպատականը։

Նորից Ռուսաստանը ձեռնարկում է ազատագրական պատերազմի. կրկնվում է 1877—78 թ. ազատագրական արշաւանքը, երբ Ազատարար Ալէքսանդր II Կայսրը, մեր այժմեան սիրեցեալ Նիկօլայ II Կայսրի Պապը, ձեռնարկեց ազատելու օսմանեան դաժան լծից հայ ժողովուրդը, բայց անիրաւ և անգութ Գերմանիան արգելք հանդիսացաւ։

Այսօր Ազատարար Կայսրի Թոռը շարունակում է իր մեծ Պապի նուիրական գործը։

Ռուսաստանը կատարում է իր պատմական անյեղլի և նախախնամական միսիան։ Նա է հասցրել օսմանեան տիրապետութեան ամենամեծ հարուածը։ Նա է ընկճել, խոնարհեցրել Թիւրք կատաղի սուլթաններին և Նրան է վիճակվում այսօր վերջ դնել Թիւրքական տիրապետութեանը մեր մայր Հայաստանում։

Ռուսահայերը երկիւղածութեամբ և պատկառանքով մօտենում են պատմական այս մեծ րօպէին և զգում են իրանց նուիրական և մեծ պարտականութիւնը։ Այդ պարտականութիւնը նրանք կը կարողանան կատարել, այն է՝ ամեն կերպ աջակցել ռուսական զէնքի և զօրքի յաղթանակին։

Երբ ստացվեց առաջին լուրը, թէ Թիւրքիան թշնամական գործողութիւններ է սկսել Ռուսաստանի դէմ, մայրաքաղաքի ռուս թերթերը միաբերան արտայայտեցին այն միտքը, թէ ծագում է Թիւրքահայաստանի ազատութեան արշալոյսը։ Եւ հայ ուսանողութիւնը, որ կազմել է մեր ժողովրդի ամենազգայուն տարրը, այդ արշալոյսի աւետման խորին հրճուանքի մէջ յայտնեց իր պատրաստակամութիւնը գնալ կռւել թշնամու դէմ և նպաստել բազմաչարչար Հայաստանի ազատութեան։

Խորին համակրանքով մեր հայ ժողովուրդը կարող է ողջունել Ռուսաստանի ազատագրական արշաւանքը, որ կոչված է վերջ դնել Թիւրքական տիրապետութեան և տապալել նրա բռնապետութիւնը։

Մեզ չը պէտք է վախեցնէ այն հանգամանքը, որ Թիւրքիային օգնում է Գերմանիան։ Համաշխարհային պատմութեան մէջ միշտ յաղթող են հանդիսացել ոչ թէ կոպիտ ույժերը և նիւթական զօրութիւնները, այլ գաղափարները, արդար դատերը, այն պատերազմները, որոնք մղվել են յանուն վեհ իդէաների և սկզբունքների։

Թիւրք-տեւտօնական կոպիտ ույժը անկարող կը լինի յաղթել ամենավեհ գաղափարը, որով այսօր համակված են Ռուսաստանը և իր ազնիւ դաշնակիցները։

Մեզ հետ է իրաւունքը, արդարութիւնը, ուրեմն և Աստուած։

Անկցի՛ Թիւրքիան։

Թող շնորհիւ ռուսական հզօր Արծուի, վերակենդանանայ Հայաստանը մոխրի տակից։

Ընդ մեզ է Աստուած։

Հ. Առաքելեան

ՀԱՄԱԵՒՐՕՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ՀՐԱՄԱՆ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԶՕՐՔԵՐԻՆ

—

Թիֆլիս, 18 հոկտ. 1914 թ.

Հոկտեմբերի 16 ին Թիւրքերը դաւաճանօրէն յարձակվեցին մեր ծովափնեայ քաղաքների և Սև-ծովի նաւատորմիղի նաւերի վրա։

Բարձրագոյնս հրամայված է Ռուսաստանը պատերազմի մէջ համարել Թիւրքիայի հետ։

Ինձ յանձնված կովկասեան զօրաբանակին հրամայվում է անցնել սահմանը և յարձակում գործել Թիւրքերի վրա։

Գեներալ-ադիւտանտ
կաւալերիայի գեներալ՝
կոմս Վօրօնցօվ-Դաշկօվ

ՄԵԾ ԻՇԽԱՆ ՄԻԽԱՅԻԼ ԱԼԷՔՍԱՆԴՐՕՎԻՉԻ ՀԵՌԱԳԻՐԸ

—

Փոխարքան կովկասեան հեծելազօրի Օգոստափառ Հրամանատար, Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Միխայիլ Ալէքսանդրովիչից ստացել է հետևեալ հեռագիրը.

«Նորին Կայսերական Մեծութիւնից հեռագիր ստացայ հետևեալ բովանդակութեամբ.

Կովկասեան տեղական հեծեալ գնդերին յայտնիր Իմ ուրախութիւնը նրանց մասերի զօրքերի մէջ մտնելու առիթով, նոյնպէս Իմ հաւատը, որ այդ գնդերը գործով ռազմական քաջութիւն հանդէս կը բերեն։ ՆԻԿՕԼԱՅ»։

«Խնդրում եմ Ձերդ Պայծառափայլութեան յայտնել կովկասի վերոյիշեալ ցեղերին Նորին Կայսերական Մեծութեան այդ ուշադրութեան մասին։ Միխայիլ»։

ՌՈՒՍ-ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—

(Պետ. Հեռ. Գործ.)

17—18 հոկտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—(Պաշտօնական)։ Տեղեկութիւն ստանալով գերմանական և Թիւրքական ռազմանաւերի դաւաճանական յարձակման մասին Սև-ծովի մեր ծովափի վրա, Կայսերական կառավարութիւնը միևնոյն թւին պատուիրագրեց Կ. Պոլսի ռուսաց դեսպանին յայտնել Բ. Դրանը՝ Թիւրքիայի հետ դիւանագիտական յարաբերութիւնների խզման և իր դեսպանատան ու հիւպատոսարանների բոլոր պաշտօնեաների հետ միասին Թիւրքիայից մեկնելու մասին։ Ռուսահպատակների շահերի պաշտպանութիւնը իր վրա վերցրեց իտալական կառավարութիւնը։

ԼՈՆԴՈՆ.—«Դէյլ-Մէյլ-Գազէտը» գրում է. «Այն փաստը, որ Թիւրքիան կանգնեց Գերմանիայի կողմը, վերջ է դնում Եւրոպայի տատանումներին և արդարացնում է այն, որ իրանք երիտասարդ-Թիւրքերը սեփական պետութեանը մահացու հարուած հասցրին։ Թիւրքերը և պրուսակները միանգամայն իրար արժանի դաշնակիցներ են, որովհետև երկուսն էլ հանդիսանում են սպառնալիք եւրոպական քաղաքակրթութեան համար»։

ԲՈՐԴՕ.—«Էքօ-դը-Պարի» տեղիս հրատարակութիւնը ասում է. «Անհրաժեշտ է որոշակի ասել, որ Թիւրքիան այլ ևս անկախ պետութիւն չէ հանդիսանում։ Այդ անհրաժեշտ է որոշել վերջնականապէս, որպէսզի այդ տեսակէտից ոչ մի կասկած չը մնայ մահմեդականների մտքերում։ Եթէ Թիւրքերը պահեն գերմանացիներին իրանց նաւատորմի և զօրքի մէջ, այդ կապացուցէ, թէ նրանք մարգարէի դրօշակը փոխարինել են Հօհէնցօլլէրնների սև խաչով։ Այդ փոխարինելը էական նշանակութիւն չէր ունենայ Ռուսաստանի պատերազմական դրութեան համար, սակայն Թիւրքիայի հետ պատերազմ սկսելուց նոր հրդեհ առաջ կը գայ Մերձաւոր Արևելքում, որի ժամանակ կոչնչացվի օսմանեան պետութեան մի մասը։ Թիւրքիայի հանդէս գալը վտանգաւոր է սոսկ իր համար»։

ԼՈՆԴՈՆ. — Քննելով Թիւրքիայի վարմունքը և նրա յարձակումը ռուսական ծովափի վրա, «Թայմսը» ասում է. «Օսմանեան տէրութիւնը այժմ ներկայանում է գերմանական նահանգ, որ պատերազմ է մղում յանուն Գերմանիայի շահերի։ Ներելի չէ, արդարև, այսուհետև ևս անվճռական լինել Թիւրքական պատրաստութիւնների վերջնական նպատակների նկատմամբ։ «Բրէսլաու»ի Թէոդոսիայի դէմ ուղղված թնդանօթները գերմանական էին։ Գերմանիան, պատերազմելով Ռուսաստանի դէմ, պատերազմում է նաև Մեծ Բրիտանիայի դէմ։ Մենք պէտք է նախատեսենք այստեղից բղխող բոլոր հետեւանքները»։

ԹԷՕԴՈՍԻԱ.—Քաղաք վերադարձան պետական բանկի պաշտօնեաները։ Կրթարանները բացվեցին։ Կեանքը իր սովորական ընթացքն է ստանում։

ԱՏՐԲԱԶԱՐ.—Մահմեդական ազգաբնակութիւնը, մզկիթում տօնի առիթով աղօթելուց յետոյ մաղթանք կատարեց Կայսրի առողջութեան և ռուս զէնքի աջողութեան համար, հեռագրեց նահանգապետին, խնդրելով առ ոտս Թագաւոր Կայսրի արկանել մահմեդականների հաւատարիմ հպատակութեան զգացմունքներ, մահմեդականների, որոնք զզուած են Թիւրքերի աւազակային յարձակումից Նովօրօսիյսկի և Թէոդոսիայի վրա։

ԲՈՒԽԱՐԵՍՏ.—Կ. Պոլսից տեղեկացնում են, որ գերմանական դեսպանը, տեղեկանալով Էնվէր փաշայից թէ՝ ֆինանսական դրութիւնը թոյլ չէ տալիս պահել զօրահաւաքված զօրքերն առանց Գերմանիայի նիւթական աջակցութեան, յանձնեց մեծ վեզիրին 50,000 ֆունտ իբրև աւանս և խոստացաւ մնացած գումարը տալ Թիւրքաց կառավարութեանը ամենամօտիկ ապագայում։ Թիւրք լրագիրները խանդավառութեամբ են ընդգծում գերմանացիների ֆինանսական աջակցութիւնը և ասում են, որ Թիւրքիան կարող կը լինի իր բարեկամական յարաբերութեան ապացոյցը ցոյց տալ իր պաշտպանին։

Ռումին լրագիրները, քննելով Թիւրքաց նաւատորմի հանդէս գալը, վերջինը համարում են զէնք Գերմանիայի ձեռքում։ Լրագիրներն ասում են, որ ռուսական նաւահանգիստների վրա գործված անասելի յարձակումը առանց պատերազմի յայտարարութեան նախ որոշում է Թիւրքաց պետութեան անհետացումը։

ՆՈՎՕՉԵՐԿԱՍԿ.—Մեծ թւով կամաւորներ են ցուցակագրվում Թիւրքաց ռազմանաւերի աւազակային յարձակման առիթով։

ԿՈՊԵՆՀԱԳԵՆ.—Կ. Պոլսից հաղորդում են, որ հոկտ. 16-ին ուշ երեկոյեան մեծ վէզիրի նախագահութեամբ կայացաւ մինիստրների խորհրդի արտակարգ նիստը։

ԲՈՐԴՕ. — Քաղաքական շրջաններում Թիւրքիայի յարձակումը յուզմունք առաջ չը բերեց։ Նա չէ կարող ազդել պատերազմի ելքի վրա. ընդհակառակն, լուծում է այն դրութիւնը, որ վտանգաւոր էր երկդիմութեան պատճառով։ Հիմք կայ կարծելու, որ բալկանեան պետութիւններն այժմ որոշակի կը յայտնեն իրանց վերաբերմունքը դէպի կռւող պետութիւնները։

ԼՈՆԴՈՆ.—Մեծ պետութիւնները օսմանեան կառավարութիւնից բացատրութիւն են սպասում Սև-ծովում տեղի ունեցածի մասին։ Հնարաւոր են գտնում, որ Թիւրքիան կը փորձէ յանցանքը ձգել գերմանացիների վրա և կը յայտնէ, որ ռուսական նաւահանգիստների ռմբակոծութիւնը Կ. Պոլսից տրված կարգադրութեան հետեւանք չէր։ Հնարաւոր է, որ Թիւրքաց նաւատորմում գործերի գլուխ կանգնած գերմանացիք իրանք աշխատեցին ճգնաժամ ստեղծել, առանց Թիւրքաց կառավարութեան գիտութեան, ի նկատի ունենալով գերման զօրքերի ճողոպրելը Անդրվիսլեան շրջանում, որպէսզի ռուս զօրքի ուշադրութիւնը դարձնեն այլ ուղղութեամբ։

ՀՌՈՄ.—Թիւրքաց դեսպանը յայտնեց, որ նրա կարծիքով՝ Թիւրքերի ծովային քայլը ընդդէմ Ռուսաստանի պէտք է համարել ոչ թէ Թիւրքաց կառավարութեան վճռի արգասիք, այլ իբրև գերման օֆիցէրների անխոհուն վարմունք Բեռլինից ստացված կարգադրութեան համաձայն, գուցէ և անգամ առանց Թիւրքաց մինիստրութեան մի քանի անդամի և երիտասարդ-Թիւրքերի կոմիտէի համաձայնութեան։

ԼՈՆԴՈՆ.—«Թայմսը» յայտնում է, որ Կ. Պոլսի մեծ բրիտանական դեսպանը նախազգուշացրեց Թիւրքաց կառավարութեանը, որ Եգիպտոսի վրա յարձակում գործելը կը համարվի իբրև թշնամական գործողութիւնների սկիզբը ընդդէմ Անգլիայի։

ԿԵՐՉ.—Այլևս նաւերը Սև-ծով չեն մտնում։ Նաւերն ամեն օր դիմում են դէպի Ազովի ծով։

ԼՈՆԴՈՆ.—Մեծ բրիտանական արտաքին գործերի մինիստրութեան հրատարակած հաղորդագրութեան մէջ ասված է, որ ուրբաթ օրը առանց որևէ նախազգուշացման Թիւրքաց կառավարութիւնը խզեց հեռագրական կապը մեծ բրիտանական դեսպանատան հետ Կ. Պոլսից։ Այդ վարմունքը հանդիսանում է, անկասկած, առաջին քայլը յետագայ ագրեսիվ քայլերի Թիւրքիայի կողմից։ Անգլիական կառավարութիւնը պէտք է ձեռք առնէ բոլոր անհրաժեշտ միջոցները՝ անգլիական շահերը պաշտպանելու, նաև բրիտանական երկիրը և Եգիպտոսը պաշտպանելու համար։

ԲՈՒԽԱՐԵՍՏ.—Կ. Պոլսից հաղորդում են. «Թիւրքաց կառավարութիւնը հրատարակեց պաշտօնական հաղորդագրութիւն, որի մէջ ասված է, թէ այն ժամանակ, երբ Թիւրքաց նաւատորմը վարժութիւններ էր կատարում Սև ծովում, նրա վրա անակնկալ յարձակում գործեց ռուսաց նաւատորմը։ Թիւրքաց կառավարութիւնը պատերազմական գործողութիւններ սկսելու պատասխանատուութիւնը ձգում է Ռուսաստանի վրա և ասում է, որ ամենակտրուկ կերպով բողոքելու է ռուսաց նաւատորմի գործած յարձակման դէմ։ Վիէննայի և Բեռլինի հեռագրական գործակալութիւնները հրատարակել են համանման հաղորդագրութիւններ»։

(Պատահական)։ Կ. Պոլսից տեղեկացնում են, որ ռուսաց դեսպանը դեսպանատան կազմի հետ հոկտ. 18-ի երեկոյեան մեկնեց Կ. Պոլսից Սոֆիայի վրայով։ Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի դեսպանները, որոնց Բ. Դուռը հոկտ. 18-ին յանձնեց անցագիրը, մեկնում են այսօր Դէդէաղաչի վրայով։

Կ. Պոլսից եկել են ռուսաց դեսպան Գիրսը դեսպանատան պաշտօնեաների հետ և մեծ թւով ռուսահպատակներ։

ԼՈՆԴՈՆ. — Րէյտէրի գործակալութիւնը հաղորդում է, որ դաշնակից պետութիւնները Թիւրքիային նոտա ներկայացրին, պահանջելով բացատրութիւն Թիւրքաց ռազմանաւերի գործած յարձակման մասին, հեռացնել գերմանացիներին Թիւրքաց ռազմանաւերից և զինաթափ անել «Գեբէն» և «Բրէսլաու» յածանաւերը, նախազգուշացնելով որ հակառակ դէպքում կը խզեն դիւանագիտական յարաբերութիւնները Թիւրքիայի հետ։ Այդ նոտային դեռ պատասխան չը կայ, սակայն յոյս ունեն, որ նման նոտայով հնար կը լինի խափանել զինված կռւի շրջանի տարածումը Եւրոպայում։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պաշտօնական։ Բեռլինի և Վիէննայի հեռագրական գործակալութիւնների այն տեղեկութիւնը, թէ իբր մեր նաւատորմը թշնամական գործողութիւններ սկսեց Թիւրքաց նաւատորմի դէմ, կոպիտ յերիւրանք է ներկայանում, որի բացարձակ նպատակն էր՝ մոլորեցնել հասարակական կարծիքը Կ. Պոլսում։ Այդ հասարակական կարծիքին գիտակցաբար իրազեկ չեն դարձնում դաւադրական յարձակման մասին, որ գործեցին Թիւրքաց ռազմանաւերը մեր ծովափի վրա գերման օֆիցէրների ղեկավարութեամբ։ Միևնոյն գործելակերպը ունեցաւ Գերմանիան մեզ պատերազմ յայտարարելիս, որ արդարանում էր նրանով, թէ իբր մեր զօրքերը նոր են խուժել նրա սահմանները, մինչդեռ և ոչ մի ռուս զինւոր մինչև պատերազմի յայտարարութիւնը չէ անցել հարևան սահմանը։ Այդպէս և այժմ Թիւրքիայի հետ թշնամական գործողութիւններից առաջ ռուսական նաւատորմը այդօրինակ գործողութիւններ իր կողմից չը սկսեց։ Ակներև է, որ եթէ յարձակման նախաձեռնութիւնը բղխէր ռուսաց նաւատորմից, այն ժամանակ բերդերի ռմբակոծութիւնը և Թիւրքաց նաւատորմի անպատժելի յարձակումը չէր էլ կարող լինել։

Հաղորդում են, որ կովկասեան սահմանում Թիւրքաց շատ զօրամասեր գտնվում են գերմանացի օֆիցէրների հրամանատարութեան ներքոյ։ Այդ սահմանի մօտ և Հիւսիսային Պարսկաստանին մերձ գտնվող շրջաններում աշնան սկզբին գտնվում էին Թիւրքական երեք զօրաբանակ։ Վերջերս գործադրված օսմանեան զօրքի զօրահաւաքութիւնը տեղի ունեցաւ գերմանացիների մշակած ծրագրով։

ՆՈՎՕՐՕՍԻՅՍԿ.—Հինգշաբթի օրը առաւօտեան տեղի ունեցած ռմբակոծութեան մանրամասնութիւնները։ Ռմբակոծութիւնը սկսվեց անթել հեռագրի կայանից, ուր վիրաւորվեցին երկու հոգի։ Շոգենաւերի վրա ընկած ռումբերից սպանվեց մի սպասաւոր։ Նաւթապահեստների մօտ սպանվեցին երկու հոգի։ Ընդամենը սպանվեցին երեք, վիրաւորվեցին չորս հոգի։ «Համիդիէն» ընդամենը կրակեց մօտ 300 անգամ։ Ազգաբնակալթիւնը փախել է. քաղաքը դատարկվել է:

ՀՌՈՄ.—Այն տեղեկութիւնը, թէ Ռուսաստանը յանձնարարեց Իտալիային Թիւրքիայում գտնվող իր հպատակների հովանաւորելու գործը, և իտալական կառավարութիւնից այդ առաջարկութիւնն անմիջապէս ընդունվելը թողեցին հասարակական կարծիքի, մամուլի և քաղաքական շրջանների վրա լաւագոյն տպաւորութիւն, իբրև ռուս-իտալական սրտագին յարաբերութիւնների նոր ապացոյց: Ամբողջ մամուլը ընդգծնում է, որ Թիւրքիան գործում է Գերմանիայի հետ համերաշխօրէն, որի համար սուլթանի զօրքերը պէտք է ներկայանան իբրև վերջին պահեստի գնդեր: Այդ գնդերը հանդէս են բերված Ռուսաստանի դէմ Վիսլայի մօտ աւստրօ-գերմանական պարտութեան պատճառով:

ՏՕԿԻՕ.—Մամուլը մատնանշում է, որ Թիւրքիան, յայտարարելով պատերազմ Ռուսաստանին Գերմանիայի դրդմամբ, կը զրկվի իր տիրապետութիւններից ոչ միայն Եւրոպայում, այլև Ասիայում:

ԽՈՅ.—Թիւրքիայից այստեղ են փախչում նիզամի և րէդիֆի շատ դասալիք եղած զինւորներ. բոլոր փախչողները գալիս են կամ հիւպատոսարան, կամ մեր զօրամասի պետի մօտ, խնդրելով պաշտպանութիւն ու հովանաւորութիւն:

ԼՈՆԴՈՆ.—Քննելով Թիւրքական ռազմանաւերի ռմբակոծութեան իրողութիւնը, «Մօրնինգ Պօստը» ասում է. «Մեծ բրիտանական կառավարութեան խնդիրը ներկայումս մինչև օրս նրա վրա ընկած խնդիրներից ամենադժուարինն է: Ոչ մի կասկած չէ կարող լինել, որ Ռուսաստանի վրա գործված յարձակումից յետոյ նոր յարձակումներ են լինելու Թիւրքերի կողմից նաև Ռուսաստանի դաշնակիցների վրա: Մեծ-բրիտանական կառավարութիւնը չէ կարող տատանվել այդ դէպքում և չէ կարող խաղաղ յարաբերութիւնների մէջ մնալ Թիւրքիայի հետ, եթէ վերջինս շուտով պատերազմ սկսէ Անգլիայի դէմ: Սակայն աւելի խելացի կը լինէր ըստ հնարաւորութեան յետաձգել Թիւրքիայի հետ կապերի խզման րօպէն, վասնզի այդ հարցի վճռի վրա կարող են ազդել ռազմա-ծովային ու քաղաքական բնոյթ ունեցող նկատումներ: Ամենալուրջ նկատում ներկայ դէպքում հանդիսանում է այն հանգամանքը, թէ ինչպէս կը լուսաբանէ Թիւրքիայի և Մեծ-Բրիտանիայի գործելակերպը հնդիկ կառավարութիւնը Թագաւորի և կայսրի հպատակներին, որ ներկայանում է մահմեդական ժողովուրդների ամենամեծ ու ամենաբարեկեցիկ մասի գերիշխանը»:

«Վեստմինստէր Գազէտը» գրում է. «Եթէ մենք ներկայ դէպքում գործ ունենայինք ոչ թէ Թիւրքիայի հետ, այլ որևէ այլ երկրի հետ, և իմանայինք, որ այդ երկրի դրօշակի տակ ռազմանաւերը ռմբակոծել են մեզ բարեկամ մեծ պետութեան երկիրը, մենք ուրիշ ոչնչի մասին հարկ չէինք ունենայ խօսելու. բայց Թիւրքիայի դրութիւնը ներկայ րօպէին այն աստիճան աննորմալ է, այն աստիճան դեռ պարզված չէ, թէ ինչ չափով նրա կառավարութիւնը պահել է անկախութիւն ու ո՛ր աստիճանի նա յօժարակամ կամ, ինչպէս պնդում են, սարսափաբար ենթարկվում է գերմանական ազդեցութեան, որ սուլթանին և նրա մինիստրութեանը պէտք է հնարաւորութիւն տրվի կշռել այն հարցը, թէ ինչ պէտք է իրանց անել առաջ, քան կը վճռեն լինելու կամ չը լինելու քայլ անել: Եթէ նրանք այդ կը վճռեն, այն դէպքում համայն աշխարհին պարզ կը լինի, որ մենք չէինք, որ յարձակվեցինք նրանց վրա, այլ նրանք մեզ վրա, այն էլ առանց որևէ առիթի, որ կարելի լինէր արդարացնել: Լօյալ մահմեդական հպատակները չէին համակրի անգլիացիների յարձակմանը Թիւրքիայի վրա, սակայն նրանք հաւասարօրէն չեն համակրի և Թիւրքիայի յարձակմանը Մեծ Բրիտանիայի վրա»:

ՊԱՐԻԶ.—«Գօլուան» գրում է. «Կ. Պոլսում ուժեղ ու կտրուկ քայլ գործելու ժամանակ Ռուսաստանը լիակատար աջակցութիւն է ստանում դաշնակիցների կողմից, ինչ տեսակ էլ որ լինի այն հետևանքը, որ կունենայ Թիւրքիայի քաղաքականութիւնը: Անգլիան և Ֆրանսիան կարող են յայտնել, որ եթէ Թիւրքիան պատերազմ է կամենում, նա կարող է ունենալ այն, այն էլ այնպիսի պայմաններով, որոնք ոչ միայն աննպաստ են նրա՛ թէկուզ «Գեբէնով» և «Բրէսլաուով» ուժեղացված նաւատորմի համար, այլ և վտանգաւոր են նրա ցամաքային զօրքի համար»:

«Ֆիգարօն» գրում է. «Թիւրքիան իր ձեռքումն ունի իր բաղդը: Օսմանեան կառավարութիւնը դեռ մի քանի ժամ ևս ունի իր տրամադրութեան տակ, առաջ քան ստուգին կը գործէ անյայտութեան վիհը....: Կը հասկանա՞յ նա արդեօք այդ»: Լրագիրն աւելացնում է, որ արդէն վաղուց Եւրոպան ձգտում է ազատվելու օսմանցիներից և արտաքսելու նրանց Փոքր Ասիա:

ՍՕՖԻԱ. — Պաշտօնական հաղորդագրութեան մէջ ասված է. «Թիւրքիայի մասնակցութիւնը հրէշային զինված միջադէպի մէջ, որպիսի մասնակցութիւնը նոր խըմբակցութիւն է յարուցանում բոլոր կռւող մեծ պետութիւնների քաղաքականութեան մէջ, բուլղար ղեկավար շրջաններում համարվում է անընդունակ՝ դրդելու Ռադոսլավովի կաբինետին խախտելու այն կուրսից, որով նա ընթանում էր մինչև օրս, այսինքն խիստ չէզոքութիւն պահելուց և սպասողական դրութիւն պահպանելուց ամեն մի դէպքի նկատմամբ, որ ընդունակ է թէկուզ կողմնակի կերպով շօշափելու Բուլղարիայի շահերը»:

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

17 և 19 հոկտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Պաշտօնական: Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

«Արևելա-պրուսական զօրաճակատում թըշնամին փորձեց ճեղքել Բակալարժէվի մօտ մեր ամուր դիրքը, բայց անյաջող: Հինգ օր տևող յարձակումներից յետոյ, գերմանացիք ահագին կորուստներ կրեցին: Շատ տեղերում մեր խրամատների դիմաց կուտակվեցին թշնամու դիակների կոյտեր, որոնք նոյնիսկ մեր հրացանաձգութեանն էին արգելք լինում: Արևելա-պրուսական զօրաճակատի մի քանի մասերում մեր զօրքերն առաջանում են: Վիսլայի ետևում մենք հաստատուն կերպով գրաւել ենք Գօստինինը, Լէնչիցան, Լօձը և Օստրովէցը: Գալիցիայում կռիւները շարունակվում են: Դրութիւնը առանց էական փոփոխութիւնների է:

«Հոկտ. 14-ին սկսված գերմանական վճռական յարձակմանը Բակալարժէվոյի մօտ մասնակցեցին մի քանի զօրաբանակ, ծանր թնդանօթների պաշտպանութեամբ: Բացի դաշտային գնդերից, այստեղ էին Կեօնիգսբերգի, նոյնիսկ Պօզնանի զօրագնդերից: Զարմանալի տոկունութեամբ գերմանացիք ուղարկում էին կրակի դէմ նորանոր զօրամասեր, որոնք ոչնչանում էին մեր գնդակացիրներից և հետևոտն գնդերից: Թշնամին այժմ կռւում է սեփական դիակների ետևում: Գորբատ Իւժա կայարանի ուղղութեամբ Վիսլայի այն կողմը, չորս օրվայ մէջ մինչև հոկտ. 15-ը մենք գերեցինք 82 օֆիցէրի և 8000 զինւորի, վերցրինք 24 գնդակացիր: Վիսլայի և Ռադոմի միջև նահանջող աւստրիական զօրքերը անջատվեցին գերմանացիներից, որոնք հեռանում են աւելի արևմտեան ուղղութեամբ:

«Արևելա-պրուսական զօրաճակատում մեր զօրքերը շատ մասերում թշնամու զօրագծից հեռու են ընդամենը 200—300 քայլով»:

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պաշտօնական: Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից:

«Արևելա-պրուսական զօրաճակատում մեր զօրքերը մասամբ առաջացել են Վլադիսլավով-Ռոմինտէնի անտառի շրջանում: Գերմանական յարձակումները Բակալարժէվի շրջանում երէկ մեղմացան թշնամու կրած ծանր կորուստների պատճառով:

«Վիսլայի ետևում մեր զօրքերը աջողութեամբ առաջացել են ամբողջ զօրաճակատով: Պետրոկովը, Օպոչնան և Օժարովը մենք գրաւեցինք: Տեղի ունեցան ընդհարումներ Օպատովի ճանապարհների վրա, ուր թշնամու առաջապահ զօրախմբերը ջարդվեցին մեզանից, որի ժամանակ մենք գերեցինք 400 հոգու, վերցրինք 6 գնդակացիր ու զինւորական սայլեր:

«Սանի վրա, Լօզախօվի մօտ մեր հետևոտն գնդերից մէկը հասաւ թշնամու դիրքերին, ներս խուժեց նրանց մէջ և, օգտվելով աւստրիացիների մէջ սկսված իրարանցումից, գրոհ տալով գրաւեց ժամանակաւոր բերդը: Մենք գերեցինք 5 օֆիցէրի, 500 զինւորի և ձեռք ձգեցինք գնդակացիրներ: Կարպատներից իջած և Նադվօրնայուի մօտ ամրացած թշնամու զօրամասը մեզանից ցիրուցան եղաւ»:

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՕ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ Հեռ. Գործ)

17 և 19 հոկտեմբերի

ՊԱՐԻԶ.—«Տանի» տեղեկութիւնների համաձայն, Ֆլիսինգէնից դաշնակիցները մասամբ առաջացել են Օստենդէի ուղղութեամբ: Անգլիացիք գրաւել են Լէֆֆինգէն և Ռավէրզիդէն: Սուէնայի յարձակման ժամանակ նրանք գերեցին բաւարցիների գումարտակին, որ հրաժարվեց կռւել և անձնատուր եղաւ:

Հոկտեմբերի 17-ի երեկ. պաշտօնական հաղորդագրութիւնը. «Համաձայն վերջին տեղեկութիւնների, բելգիական պատերազմաբեմում էական ոչինչ չը կայ: Նիւպոր-Դիքսմիւնդէ շրջանում ձախ զօրաթեւում թշնամին ուժեղ յարձակումների դիմեց անգլիական զօրքերի զօրաճակատի դէմ և Լա-Բասսէի երկու ափում, բայց ապարդիւն: Նկատվում է, որ գերմանացիք եռանդուն գործողութիւններ են դիմում Բէյմսի շրջանում, Մասսի աջ ափին և Ֆրէնից դէպի հարաւ՝ Վէվրի շրջանում»:

Հավասի գործակալութիւնը հաղորդում է, որ հոկտ. 17-ի օրը գերմանացիք փորձեցին դիմել ընդհանուր արշաւանքի, իսկ Արրասի և Նիւպորի միջև կատաղի յարձակումների ձեռնարկեցին: Նիւպորի և Լա-Բասսէի միջև տեղի էին ունենում յաջորդաբար փոփոխվող յարձակումներ ու նահանջումներ: Նիւպորից դէպի հարաւ գերմանացիք վանվեցին Ռամսկապելէ գիւղից: Իպրից դէպի հարաւ մենք գրաւեցինք մի քանի գիւղ. մենք առաջացել ենք Պասսօտենդէլէի ուղղութեամբ: Լա-Բասսէի և Արրասի միջև գերմանացիների բոլոր յարձակումները ետ մղվեցին նրանց համար խոշոր կորուստներով: Շօն շրջանում մենք նոյնպէս առաջ էինք գնացել գետի աջ ափի բարձունքներում, Սուասօնից ներքև, բայց պէտք է նահանջէինք Վայի ուղղութեամբ: Սուէնի շրջանում մենք առաջացել ենք: Կատաղի ճակատամարտ է Արգօններում: Վէվրում մենք որոշ տարածութեամբ անտառ ետ խլեցինք թշնամուց:

ԼՈՆԴՈՆ.— Դաշնակիցները նորից գրաւեցին Լիլլը: Այժմ անհնարին է, որպէսզի գերմանացիներին աջողվի դիմել Կալէի ուղղութեամբ:

ՀԱՎՐ.—Բելգիական պաշտօնական հաղորդագրութիւնը յայտնում է գերմանական մի շարք անաջող յարձակումների և դաշնակիցների տարած փառաւոր յաղթութիւնների մասին: Դաշնակիցները առաջացել են շատ կէտերում:

ԼՈՆԴՈՆ.—Հօլլանդական թղթակիցը, նկարագրելով Օստենդէի մօտ հոկտեմբերի 16-ին տեղի ունեցած կռիւը, որի ժամանակ գերմանացիք սոսկալի ջարդ կերան, աւելացնում է, որ քաղաքում բոլոր փողոցները լցվել են վիրաւորների և մեռելների խմբերով:

ՊԱՐԻԶ. — Պաշտօնական հաղորդագրութիւնը յայտնում է, որ կենտրօնում ֆրանսիացիք առաջացել են Սուէնից դէպի հիւսիս: Մնացած տեղերում դրութիւնը նախկինն է:

ՀԱՎՐ. — Բելգիական գեներալ-շտաբը յայտնում է, որ հոկտ. 17-ին թշնամին կատաղի յարձակումներ գործեց Ռամսկապելէ և Պէրվիւս շրջանում: Երկրորդ յարձակումը ետ մղվեց, իսկ առաջինը ստիպեց մեր զօրքերին մի փոքր նահանջել, բայց կէսօրից յետոյ գրաված տարածութիւնը մասամբ նորից գրաւվեց:

Հեղեղը, որ տարածվում է Իզէրի մօտից մինչև Նիւպոր և Դիքսմիւնդէ, հասնում է մինչև Պէրվիզի շրջակայքը:

Դիքսմիւնդէի և Լուիգէնի միջև ոչինչ էական բան չեղաւ: Դաշնակիցները առաջացել են Իպրէրէով արևելեան ուղղութեամբ: Թշնամին ստիպված էր զիջել Վիկնշոտէն և Կօրդիկլէրը:

Պալինդէլում և Լիս գետի վրա գերմանացիք մեծ դժուարութեամբ են պաշտպանվում: Ընդհանուր առմամբ դրութիւնը փոխվեց շատ աննշան:

ՊԱՐԻԶ.— Պաշտօնական հաղորդագրութիւն. «Նիւպորի և Դիքսմիւնդէի միջև ոչինչ էական բան տեղի չունեցաւ: Գերմանացիք շարունակեցին կատաղի յարձակումները Իպրից դէպի հարաւ, արևելք ու հիւսիս ընկած շրջաններում, բայց մենք վանեցինք բոլոր յարձակումները և նոյնիսկ թեթև առաջացանք Իպրից դէպի հիւսիս և բաւականին՝ դէպի արևելք: Վաղ առաւօտեան Լիսի հովտի կողմից շարժված թշնամու ուժերին աջողվեց տիրել Գօլլէբէկին և Մէսինէզին, սակայն դաշնակիցները կըտրուկ հակայարձակումներով երեկոյեան դէմ ետ վերցրին այդ երկու գիւղերը: Մնացած զօրաճակատում երէկ տեղի ունեցան տաք թնդանօթաձգութիւն ու մի քանի հակա-յարձակումներ, որոնց ձեռնարկեց թշնամին վերջին օրերս նրանից խլված տարածութիւնը ետ խլելու նպատակով, սակայն յարձակումները ի դերև ելան: Չափազանց տաք կռիւ տեղի է ունենում Արգօններում, ուր գերմանացիներին ոչ մի տեղ չէ աջողվում առաջանալ»:

Լրագիրները միաբերան յայտնում են, որ գերմանացիների յուսահատական յարձակումները դաշնակցական ամբողջ զօրաճակատի դէմ որևէ էական փոփոխութիւն չը մտցրին պատերազմաբեմի ընդհանուր կացութեան մէջ:

ՀԱՎՐ.—Բելգիական գեներալ-շտաբի պաշտօնական հաղորդագրութիւնը. «Թշնամու ուժերը, որոնք մասամբ գրաւում էին Ռամսկապելէն, ցիրուցան արվեցին Նիւպոր-Դիքսմիւնդէ երկաթուղու այն կողմը: Նիւպորի ռմբակոծութիւնը կրում էր բաւականին տաք բնոյթ: Իզէրի և Նիւպոր-Դիքսմիւնդէ երկաթուղու միջև հեղեղը ամբողջ գետինը դարձրել է ճահիճ ու փչացրել է թշնամու դիրքերը: Դիքսմիւնդէից դէպի հարաւ, Լինգօյի և Պասխենդալէի միջև, ֆրանսիացիք առաջխաղացումը շարունակեցին: Պասխենդալից դէպի հարաւ անգլիացիք վանեցին գերմանացիների յարձակումները, պատճառելով նրանց խոշոր կորուստներ: Գերմանական երրորդ պահեստի զօրաբանակը ստացաւ օգնութիւն»:

ԱՒՍՏՐՕ-ՍԵՐԲԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

19 հոկտեմբերի

ԲԵԼԳՐԱԴ.—Երէկ վաղ առաւօտից թշնամու ծանր արտիլէրիան սաստկացրեց կրակը Բելգրադի արևմտեան դիրքերի դէմ, նաև Ցիգանլիա կղզու դէմ, բայց անհետևանք: Մի քանի ռումբեր ընկան ու պայթեցին քաղաքի հիւսիսային մասում, որի ժամանակ սպանվեց 1, վիրաւորվեցին 3 մարդ:

Երէկ երեկոյեան արտիլէրիական ճակատամարտի ժամանակ սերբիական մի ռումբ ընկաւ թշնամու ականի վրա, որ դրված էր Զէմլինի երկաթուղու կայարանից ոչ հեռու: Տեղի ունեցաւ սոսկալի պայթում: Պայթած ականի մօտ գտնվող երկաթուղային պահակատանը, որի մէջ թշնամու վառօդի պաշարն էր, պայթեց: Թշնամու կորուստների մասին ոչինչ յայտնի չէ:

ՆԻՇ.—Հոկտ. 16-ին առ. ժամը 7-ից մինչև ժ. 12-ը Գուչէվի ուղղութեամբ գտնվող թշնամին սկսեց ռմբակոծել Էմինօվի մօտի սերբիական դիրքերը, յետոյ անցաւ, որը վանվեց: Սերբերը շուտով դիմեցին փոխյարձակման, որ փոխվեց տաք սուինային կռւի: Թշնամին կրեց ծանր կորուստներ և շտապով նահանջեց, թողնելով կռւի դաշտում մի ունտ-օֆիցէրի, երկու կապիտանի և մօտ 300 զինւորի: Երեկոյեան միևնոյն զօրաճակատում թշնամին յարձակվեց սերբիական դիրքերի վրա, բայց ետ մղվեց խոշոր կորուստներով:

ԾՈՎԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

18 և 19 հոկտեմբերի

ԼՈՆԴՈՆ.—Մամուլի բիւրօն տեղեկացնում է, որ Դիւնկիրխէնից վերադարձող «Հերմէս» յածանաւը դիպչելով գերմանական ստորջրեայ նաւից նետված ականին, ջրասոյզ է եղել Պադը-Կալէի նեղուցում: Համարեա բոլոր ճանապարհորդներն ազատված են: Խեղդվածների ճշգրիտ թիւը յայտնի չէ:

ԼՈՆԴՈՆ.—Անգլիական «Վենէրաբլ» ռազմանաւը ամբողջ օրը իր կրակով պաշտպանում էր բելգիական ձախ զօրաթեւը միւս փոքր ռազմանաւերի հետ: Այսօր 14-րդ օրն է, որ անգլիական ռազմանաւերը ռմբակոծում են ծովից:

Րէյտէրի գործակալութիւնը լրացուցիչ տեղեկութիւններ է յայտնում «Հերմէս» յածանաւի կորստեան մասին: Յածանաւը շաբաթ օրը, առ. ժամը 8-ին կպաւ երկու ականի և ջրի երեսին կարողացաւ մնալ 45 րօպէ, յետոյ խորասուզվեց: Վրա հասած ականանաւերը ազատեցին նաւաստիների մեծ մասին. պակասում են 40 մարդ:

ՊԱՏԵՐԱԶՄ ՀԵՌԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

17—19 հոկտեմբերի

ՏՕԿԻՕ.—Պաշարիչ թնդանօթներով սաստիկ ռմբակոծվում է Ցինդաօն:

ՊԱՐԻԶ. — Տօկիօյից պաշտօնապէս հեռագրում են, որ սկսվել է ընդհանուր գրոհ ծովի և ցամաքի կողմից Ցինդաօյի դէմ:

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Ի լրումն այն տեղեկութիւնների, որ ճապօնական նաւատորմը գրաւել է Մարշալեան գերմանական կղզիները, Տօկիօյից հաղորդում են, որ ճապօնական ծովային մինիստրութիւնը պաշտօնապէս յայտարարել է, թէ ժամանակաւորապէս գրաւում է՝ պատերազմական նպատակների համար՝ Մարիեան գերմանական կղզիները, նաև Կարոլինեան Արշիպելագոսի արևելեան ու արևմտեան մասերը:

ՀԱՄԱԵՒՐՕՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

17—19 հոկտեմբերի

ԲՕՐԴՕ.— Իզվօլսկին այսօր ընդունվեց Դելկասէից՝ մինիստրների խորհրդի նիստից յետոյ:

ԼՈՆԴՈՆ.—Պաշտօնապէս յայտնվում է, որ Ֆիշէրը նշանակվել է ծովային առաջին լօրդ:

ՊԱՐԻԶ.—Պուանկարէն դիտեց բանակը: Գոհունակութիւն յայտնելով զօրքերի կարգապահութեան ու քաջութեան առիթով, նախագահն այցելեց Մարնայի կռւում ընկած բազմաթիւ զինւորների գերեզմանները:

ՆՈՎՕՉԵՐԿԱՍԿ.—Մօտ 100 ուսանող դարձան կամաւոր զինւոր:

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Բարձրագոյն անուանական հրամանով առաջարկվում է ֆինանսների մինիստրին բաց թողնել 500 միլիոն ռուբլու 5%-ային նոր ներքին փոխառութիւն 10 տարի ժամանակով: Ֆինանսների մինիստրի հրատարակած կարգադրութեան համաձայն, փոխառութեան օբլիգացիաները արդէն վաճառ են հանված պետական բանկի բաժանմունքներում ու գրասենեակներում և մասնաւոր բանկերում:

Ստատս-սեկրէտար Գօրեմիկինի նախագահութեամբ գործող առանձին մասնաժողովը որոշեց թոյլատրել ֆինլանդական սենատին կնքել 30 միլիոն մարկի փոխառութիւն, ի նկատի ունենալով ֆինլանդական գանձատան ծանր դրութիւնը, որ առաջ եկաւ այն հանգամանքից, որ գերմանական կառավարութիւնը յարքունիս գրաւեց արտասահմանում ֆինլանդական խոշոր գումարները:

Ֆինանսների մինիստրը հրամայեց փակել արքունի գինու կրպակների համարեա կէսը և ձեռնարկել աստիճանաբար արձակելու գինեվաճառներին և դրամահաւաքներին:

Մինիստրների խորհուրդը որոշեց տալ համառուսական զեմստվային միութեանը ևս 10 միլիոն, քաղաքային համառուսական միութեանը 3 միլիոն ռուբլի: Խորհուրդը գտաւ, որ վիրաւոր զինւորների ընտանիքներին խնամելու համար տրվող գումարները պէտք է համարվեն ոչ թէ փոխառութիւն, այլ անվերադարձնելի նըպաստ, պայմանով միայն, որ ծախքերի վրա լինի կառավարական վերահսկում:

ՊԱՐԻԶ.—Բոլոր լրագիրները դրութիւնը գտնում են աւելի ու աւելի բաւարար: Գերմանացիների բոլոր փորձերը լիակատար անաջողութեան հանդիպեցին:

Մետերլինկը «Ֆիգարօյի» մէջ յիշեցնելով, որ գերմանացիք Բրիւսէլի մեծ հրապարակը, քաղաքային տունը և տաճարը պայթեցնելու են, առաջարկում է դաշնակիցներին հիմնայատակ անել Բեռլինը, եթէ գերմանացիք աւերեն Բրիւսէլը: Անտվերպէնը աւերելու համար պէտք է ոչնչացնել Համբուրգը, Բրիւգգէի դիմաց՝ Նիւրենբերգը, Գէնտի դիմաց՝ Միւնխէնը:

ԼՈՆԴՈՆ.—«Դէյլի-Տելեգրաֆին» իրազեկ ֆինանսական շրջաններից հաղորդում են, որ հոկտեմբերի 17-ին Ռուսաստանից Լոնդոն է փոխադրվել 12 միլիոն ֆունտ, որ պետական բանկի անունով դրված է անգլիական բանկում ընթացիկ հաշւով:

ԲԱԳՈՒ.—Հրապարակի վրա՝ ռուսաց և դաշնակից զէնքին աջողութիւն տալու համար՝ մաղթանք կատարելուց յետոյ, տեղի ունեցաւ բոլոր տղայոց և օրիորդաց կրթական հաստատութիւնների հսկայական ցոյց: Հանդիսաւոր երթի առջևից գնում էին վետերանները և երաժշտախմբերը: Քաղաքապետի շինութեան առաջ ցուցարարները ուռա աղաղակներով և ազգային օրհներգով դիմեցին քաղաքապետին, խնդրելով առ ոտս Թագաւոր Կայսրի արկանել ամբողջ ազգաբնակութեան հաւատարիմ հպատակութեան զգացմունքները: Բուռն ովացիաներ եղան նաև ի պատիւ բարեկամ մեծ պետութիւնների հիւպատոսների:

ՊԱՐԻԶ.—Մօրալ և քաղաքական գիտութիւնների ճեմարանը բանաձև ընդունեց, որի մէջ նորից մատնանշված է, թէ գերմանական կառավարութիւնը անտես է առնում արդարութեան ու իրաւունքի տարրական հիմունքները և վերադառնում է բարբարոսութեան ժամանակներին:

ԲՕՐԴՕ.—Ժընէվից տեղեկացնում են, որ գերմանական զօրքի անունով տրված վերջին հրամանով թոյլատրվում է օֆիցէրութիւն տալ ունտէր-օֆիցէրներին և անգամ հասարակ զինւորներին, որոնք աչքի կընկնեն կռիւներում:

ՊԱՐԻԶ.—Պուանկարէն զինւորական մինիստրի ուղեկցութեամբ մեկնեց գործող բանակը:

ԻՏԱԼԻԱՅՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

19 հոկտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Անգլիական մասնաւոր աղբիւրները յայտնում են, որ իտալական ռազմի նաւատորմը Աբրուցցի դքսի հրամանատարութեամբ կանգնած է միանգամայն կազմ-պատրաստ:

ՊԱՐԻԶ.—Հռոմից հաղորդում են, որ, «Ջիօռնալէ-դ'Իտալիայի» տեղեկութիւնների համաձայն, Ռուբինին մինիստրների խորհրդի մէջ առաջարկել է կաբինէտին՝ խնդրել պալատից թոյլտւութիւն՝ ծածկել 300 միլիոն զինւորական ծախքերը նոր հարկերով: Սալանդրան և միւս մինիստրները այդ միջոցը ներկայ րօպէին անյարմար են գտել: Ի նկատի ունենալով, որ պետական գանձարանի և արտաքին գործերի մինիստրների տեղերը թափուր են, Սալանդրան վճռել է հրաժարական տալ:

ՀՌՈՄ.—Երկրի համար բոլորովին անսպասելի կաբինէտի անկումը նախորոշված էր քաղաքական շրջաններից պարլամենտական նստաշրջանի դեռ ամենասկզբում: Մինիստրական ճգնաժամը տևեց 3 օր: Իտալիայի ռազմի պատրաստութիւններին վերաբերող հարցերի քննութեան ժամանակ մինիստրների խորհրդում երևան եկան երեք հոսանք. մինը՝ յօգուտ Իտալիայի ակտիվ քայլի, որին կողմնակից էր գաղութների մինիստր Մարտինին, միւսը՝ հակառակ էր, որին կողմնակից էր պետական գանձարանի մինիստր Ռուբինին, և երրորդը՝ ոչ բոլորովին պարզ՝ կողմնակից էր չէզոքութեան, սակայն, միևնոյն ժամանակ շարունակելով ռազմական պատրաստութիւնները չը նախատեսված դէպքերի դիմաց: Զինւորական մինիստրը յամառ կերպով պահանջում էր նոր արտակարգ գումարյատկացումներ, որոնց դէմ խօսեց Ռուբինին: Վերջում Ռուբինին ասաց, որ կը համաձայնէ պահանջվող գումարներին և նոր զոհաբերութիւններին, եթէ այդ գումարները գործադրվեն բացառապէս զօրքի կարիքների համար և եթէ Իտալիայի հանդէս գալու հարցը վճռվի վերջնականապէս: Որովհետև մինիստրների միջև անհնարին եղաւ համաձայնութիւն կայացնել, ուստի Ռուբինին հրաժարական տուեց, որը և առիթ տուեց կաբինէտի անկման: Հաւանօրէն Թագաւորը նորից կը յանձնէ Սալանդրային կազմել նոր կաբինէտ, որ, անկասկած, կը լինի հաստատուն և ճշգօրէն կորոշէ Իտալիայի ապագայի դրութիւնը եւրոպական միջադէպում:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)

17 և 18 հոկտեմբերի

ՍՏՕԿՀՕԼՄ.— Շվէդական գիտական հաստատութիւնները, որոնք զբաղվում են Նոբէլի մրցանակների բաշխմամբ, վճռեցին, ի նկատի ունենալով Եւրոպայի արդի դրութիւնը, չը յատկացնել այս տարի գրականութեան, բժշկութեան, քիմիայի և ֆիզիկայի մրցանակները, այլ յետաձգել մինչև եկող տարի:

ԼՈՆԴՈՆ.—«Րօգիլա» հիւանդանոցային նաւը փոթորկից կպաւ ժայռերի Վիտբի մօտերը։ Բոլոր կանանց ազատեցին նաւակները։ Մօտ 80 հոգի խեղդվեցին։

ՍՕՖԻԱ.—Անձնասպան եղաւ յայտնի բանաստեղծ Պեակօ Եավօրովը։

ՌՈՒՍ-ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ «Рус. Вѣд.»-ին հեռագրում են Պօլսից. «Այստեղ սաստկացաւ հայերի հալածանքը։ Ասում են, որ կազմակերպվել է մի կօմիտէտ, հակահայկական տերրօրիստական ակտեր կատարելու համար»։

◆ Զէյթունում ձերբակալված է թիւրքական իշխանութեան հալածանքից սարերն ապաւինած հայերի մի խմբի պարագլուխ Զաւուշը, որը բանտում տանջանքներին չը դիմանալով՝ վախճանվեց։

◆ Վանից Պօլիս են տարել շղթայակապ՝ Հնչակեան կուսակցութեան անդամ Հասօյին, որին մեղադրում են Էնվէր փաշայի կեանքի դէմ մահափորձ կատարելու մէջ։

◆ Վենիզէլոսը յայտնել է երրեակ համաձայնութեան պետութիւններին, որ Յունաստանը նրանց տրամադրութեան ներքոյ է դնում իր նաւատորմն ու զօրքը։

◆ Անգլիական մամուլի կարծիքով, Թիւրքիայի հանդէս գալու հետևանքը կը լինի այն, որ պրուսական միլիտարիզմը բոլորովին կը ջնջվի և Թիւրքերը վերջնականապէս կարտաքսվեն Եւրոպայից, և Սիրիայի, Արաբիայի, Միջագետքի ցեղերը կազատվեն Թիւրքիայի տիրապետութիւնից։

◆ «Рѣчь»-ը հաղորդում է, որ Թիւրքաց նաւերի ռուսական Սև-ծովի ափի քաղաքների վրա յարձակվելու առիթով Պետրօգրադի, Լոնդոնի և Պարիզի կաբինէտների միջև եղած մտքերի փոխանակութիւնից յետոյ՝ Անգլիան և Ֆրանսիան միաժամանակ Կ. Պօլսին ուլտիմատում ներկայացրին, որ 24 ժամվայ ընթացքում Կ. Պօլսից և ընդհանրապէս Թիւրքիայից արտաքսվեն գերմանացի բոլոր զօրականները, և որպէսզի սև-ծովեան նաւահանգիստները փակվեն այն նաւերի առաջ, որոնք ռմբակոծել են ռուսական ծովափը։

◆ «Երուսաղէմ» նաւի ճանապարհորդները յայտնում են, որ Բօսֆօրից 7 մղոն հեռու շոգենաւը հանդիպեց թիւրքական էսկադրային, որ կազմված էր 2 ռազմանաւից, 2 կածանաւից և 6 ականակիրներից։ «Բրեսլաուն» կարծես ծածկելու համար անցաւ «Երուսաղէմի» շուրջը։ Իսկ «Տուրգութ» մարտանաւը կտրեց ռուսական շոգենաւի առաջը, որը, ընդհարումից խուսափելու համար, ստիպված էր հառ-հառ գընալ։ «Բրեսլաուն» ամբողջովին գերմանական ձեւով էր։

◆ Կ. Պօլսից հեռագրում են Օդէսսա, որ Թիւրքաց էսկադրան ծով մտնելուց մի քանի ժամ յետոյ, Սանդէրսը մեծ վեզիրի մօտ եղած խորհրդակցութեան մէջ կարդաց Վիլհէլմ կայսրի հրամանը՝ «Գեբէնը» և «Բրէսլաուն» անմիջապէս զինելու մասին, և բոլոր գերմանացիներին դուրս բերել Թիւրքիայից, եթէ Թիւրքերը հրաժարվեն պատերազմական գործողութիւններ սկսել Ռուսաստանի դէմ։

◆ Բուխարեստի քաղաքական շրջաններում ենթադրում են, որ Թիւրքիայի հանդէս գալը կուժեղացնի Ռուսաստանի դիրքը, որովհետև իր ետևից պատերազմի կը խառնվի Իտալիան և Ռումինիան։

◆ Պետրօգրադի Թիւրքաց դեսպանը հարցապնդում է ուղղել Բ. Դրան Թիւրքաց մարտանաւերի սև-ծովեան նաւահանգիստների և քաղաքների վրա յարձակվելու մասին։ Պատասխանը սպասվում էր երէկ։ Մինչև այդ, երեք օր առաջ դեսպանը Սազօնօվին հաւատացրել է Թիւրքիայի չէզոքութեան մասին։

◆ Պետրօգրադից հեռագրում են, որ Թիւրքիայի անակնկալ յարձակումը բոլորին յանկարծակիի բերեց։ Նոյն իսկ արևմտեան և արևելեան զօրաճակատների դէպքերը իրանց նշանակութիւնը կորցրին։

◆ Կ. Պօլսից հեռագրում են, որ Ռուսաստանի վրա յարձակվելու հարցը Թիւրքաց մինիստրների խորհրդում քննվեց վերջին նիստում։ Ներկայ եղողների մեծ մասը հակառակ էր։ Էնվէր-փաշան պնդեց իր պահանջի վրա և վճռեց գործել անկախ՝ գերմանական դեսպան Վագենհէյմի մասնակցութեամբ։

◆ Պետրօգրադի բօլգարական դեսպան Մաջարօվը խուսափել է որևէ կտրուկ պատասխան տալ ժուռնալիստներին այն մասին, թէ ինչ դիրք կը բռնէ Բօլգարիան ներկայ պատերազմում։

◆ Պետրօգրադի պարսից դեսպանը հերքում է Թիւրք-պարսկական դաշինքի տեղեկութիւնը։

◆ Պետրօգրադից հեռագրում են. «Թիւրքական երեք կօրպուսը, որ աշնան սկզբում գտնվում էին կովկասեան սահմանի մօտ, նօրմալ կազմակերպութեամբ պէտք է կազմված լինեն ամեն մէկը 3 դիվիզիայից, մի քանի հեծելագնդից և տեխնիկական զօրքից։ Դիվիզիան նօրմալ ձեւով կազմված է 3 վաշտեայ գնդերից. իւրաքանչիւր արագաձիգ հրետանին ունի 4 թնդանօթ. 5 էսկադրոնը կազմում են մի հեծելագունդ։ Երեք գունդը միացած են կավալերիական բրիգադային, որին տրված են գնդացիրի վաշտ և 2 վաշտեայ հեծեալ արտիլերիական բատալիոն։ Բացի այդ զօրքերից, Հայաստանում կազմակերպված են 50-ի չափ քիւրդական գնդեր, ընդհանուր թւով մինչև 15—20,000 ձիաւորներ, որ տալիս են քիւրդական ցեղերը։ Իր պատրաստութեամբ, կարգապահութեամբ և սպառազինութեամբ աշիրէթների հեծեալ գնդերը առաւել ստոր են կանգնած, քան կանօնաւոր հեծելագունդը։ Զօրահաւաքի յայտարարութեամբ նիզամի զօրամասերը լրացված են պատերազմի ժամանակի պահանջված թւով նախկին ռեդիֆ զօրամասերի զինւորներով»։

◆ Սօֆիայի Թիւրքական դեսպան Ֆէտհի բէյ, անձնական գործի (ամուսնութեան) պատրուակով գնալով Բերլին՝ իսկապէս յանձնարարութիւն ունէր պարզելու Գերմանիայի ներքին դրութիւնը, նոյնպէս և այն կօմբինացիները, որոնք պատերազմից յետոյ տրվելու են Թիւրքիային՝ Բերլինին մատուցած ծառայութիւնների համար։

ՄԱՄՈՒԼԻ ԿԱՐԾԻՔԸ

Մայրաքաղաքի թերթերը Թիւրքաց նաւատորմի Սև-ծովում երևալու և գործելու առիթով գրում են.

«Рѣчь»-ը ասում է. «Թիւրքիայի յարձակումը անպաշտպան քաղաքների վրա՝ հաւասարազօր է պատերազմի յայտարարութեան։ Երէկվանից Ռուսաստանը պատերազմի մէջ է գտնվում Թիւրքիայի հետ»։

«Н. Вр.»-ն ասում է. «Թիւրքաց դեսպանը չը գիտէր Թիւրքաց նաւատորմի հանդէս գալու պատրաստութեան մասին։ Թիւրքերի մօտ ամեն ինչ գաղտնի է կատարվում, մինչև անգամ պատերազմի յայտարարութիւնը։ Այժմ թափված է խաղաղ քաղաքացիների արիւնը։ Պատերազմը սկսվել է։ Շուտով Փոքր-Ասիայի դաշտերն ու Սև ծովի ալիքները կը թնդան ռուսական թնդանօթների որոտից։ Թիւրքիայի խաղը հէնց իրան համար է վտանգաւոր»։

«День»-ը ասում է. «Գաղտնին աշկարա դարձաւ։ Դաւադրօրէն յարձակումը մեր ափերի վրա բացեց Թիւրքիայի իրան մտքերը։ Բայց ռուսական զօրաբանակը ընտելացել է Թիւրքաց զօրքին և այդ զօրքի բոլոր աւանդութիւնները ստուգվել են Թիւրքիայի հետ եղած պատերազմներում։ Գերմանիայի դաշնակցութիւնը Թիւրքիայի հետ, դա կոյր ոյժի դաշնակցութիւն է ոչնչով չոգեշնչված։ Այդ դաշնակցութեան դէմ դուրս են եկել համաձայնօրէն Ռուսաստանը, Ֆրանսիան և Անգլիան։ Թիւրքիան պատերազմի վերջում պէտք է մտնի իր ազգագրական սահմանները։ Սև-ծովի բանալիները ընդմիշտ պէտք է խլել նրա ձեռքից»։

«Бирж. Вѣд.»-ն ասում է. «Ռուսական Սև-ծովի նաւատորմը կազմ պատրաստ է և արժանի պատիժը կը տայ Թիւրքաց նաւատորմին։ Թիւրքերի պատմական արտօնութիւնները պէտք է ջնջվեն մեր կողմից։ Պատերազմը նրան յաղթութիւն չէ խոստանում»։

«Нов. Вр.»-ն գրում է. «Ոչ Գալիցիայի կռւի դաշտը, ոչ Աւգուստովեան անտառներում և Վիսլայի վրա գերմանացիների կրած պարտութիւնը չը պայծառացրին Թիւրքաց կառավարութեան գիտակցութիւնը։ Գազազված ու խելացնոր Թիւրքիան մոռացաւ պատմութեան արիւնալի դասերը»։ Դիմելով բալկանեան ժողովուրդներին, լրագիրն ասում է, որ այժմ միայն մի բան է մնում մեր թշնամիների և բարեկամների առաջ. ով մեզ հետ չէ, նա մեր դէմ է։ Բօլգարիան չէ կարող պասիվ հանդիսատես մնալ։ Այդ կը լինի դաւաճանութիւն սլաւօնականութեանը, կը լինի յաւիտենական ամօթ։ Դիմելով Պարսկաստանում գերմանացիների նիւթած դաւերին, «Н. В.»-ն նկատում է, որ զինելով ու մեր վրա նետելով քիւրդերին՝ Գերմանիան խախտեց Պարսկաստանի չէզոքութիւնը և պատերազմը փոխադրեց պարսկական հողը։

«Бирж. Вѣд.»-ն գրում է. «Կովկասեան քաջարի զօրքերը կը հարթեն նրա ճանապարհը դէպի Փոքր-Ասիա, իսկ Սև-ծովի նաւատորմը մէջտեղից կը բառնայ Թիւրքաց [illegible] նաւատորմը, որ ապաստան է տալիս գերմանացի փախստականներին։ Այժմ չը կայ այն ոյժերի համաեւրոպական կօմբինացիան, որոնք մի քանի անգամ ազատեցին Թիւրքիան վերջնական կործանումից, ռուսական ոյժի ծանր հարուածից։ Բօլգարական չէզոքութիւնը արդարացնող շարժառիթները վերացել են։ Այժմ Բօլգարիան կամ պէտք է դաւաճանի Ռուսաստանին, կամ գնայ նրա հետ միասին»։

«День»-ը գրում է. «Թիւրքիայի քարտէզը պէտք է վերացնել։ Սև-ծովը փակող բանալիները անհրաժեշտ է ընդ միշտ խլել նրանից։ Թիւրքիայի պատմութիւնը յեղափոխութիւնից յետոյ ապացուցեց նրա լիակատար անկարողութիւնը՝ կառավարել բազմացեղ պետութիւնը»։

«Рѣчь»-ը գրում է. «Ճակատագրի անողոքութեամբ պէտք է վճռել միջազգային հաւասարակշռութեան ու ազգային ազատագրութեան հարցերը։ Մեր ազգային կեանքի հարցերի շարքում գտնվում է Թիւրքական վերջնական բաժանման խնդիրը, որի մէջ շահագրգռված են Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը, հայերը և բօլգարները։ Բօլգարիայի համար ընտրութիւն չը կայ։ Մօտիկ օրերում Թիւրքիան պատերազմը կը փոխադրէ Անդրկովկաս։ Արդէն այժմ սկսվել է շարժում Թիւրքահայաստանում, բայց մենք չենք դաւաճանի մեզ վստահացած հայերին։ Իրանց սեփական երկրում Թիւրքերը կը հանդիպեն դիմադրութեան։ Կովկասեան ժողովուրդները լիովին կը միաբանվեն։ Ժամանակը եկել է իրագործել այն խոստումները, որ տուին կովկասեան պատգամաւորները Պետական Դումայում և մամուլի մէջ։ Դումայի կօմիտէտը հիւանդանոց է ուղարկում Կովկաս մահմեդական Ջաֆարովի, հայ Պապաջանեանի և վրացի Գէլօվանիի հսկողութեամբ։ Թող ազգային միութեան այդ սիմվօլը լինի նաև հայրենիքի պաշտպանութեան ընդհանուր գործում և ի մի միացնէ կովկասեան ժողովուրդներին նոր ամուր կապով։ Դրանումն է լաւագոյն ապագայի գրաւականը, դէպի ուր մեզ տանում է պատերազմը»։

«Р. Вѣд.»-ն առաջնորդող յօդուածում ասում է. «Բերլինը, մղելով Թիւրքիային պատերազմի գիրկը, յոյս ունի ոչ թէ Թիւրքիայի համեստ ոյժի վրա, այլ պանիսլամական շարժման զարգացման վրա։ Կարելի է կարծել, որ այս կը լինի վերջին ռուս-թիւրքական պատերազմը։ Թիւրքիան, կապելով իր բաղդը Գերմանիայի հետ, իր գոյութիւնն է վտանգում իբրև պետութիւն»։

«Р. Сл.»-ն գրում է. «Ռուսաստանը պէտք է ստանայ իր սեփական տան բանալիները և պէտք է մէկ անգամ ընդ միշտ լուծէ նեղուցների հարցը։ Մեր պարտականութիւնն է—ազատել սուրբ երկիրը և բազմաչարչար հայ ժողովուրդը, որ տասնեակ տարիներ արիւնով է հատուցանում եւրոպական հաւասարակշռութիւնը պահպանելու փորձերի համար»։

ԿԱՐԾԻՔՆԵՐ

◆ «Р. Вѣд.»-ում Օգլինը այն կարծիքն է յայտնում, որ Թիւրքիան մեզ համար երկրորդական պատերազմական հակառակորդի շարքում պէտք է դասվի։ Ընդհանուր առմամբ պատերազմը չի պահանջի ոյժերի սաստիկ լարումն և վատթարագոյն դէպքում առանձին անհաճելիութիւն կը պատճառէ, ռմբակոծելով Սև ծովի անպաշտպան նաւահանգիստները և սահմանամերձ շրջանները։ Այս պատերազմում ձեռք կը ձգենք նեղուցները։

◆ Իտալական քաղաքական շրջաններում Թիւրքաց նաւատորմի յարձակումը ռուսական նաւահանգիստների վրա ընդունվում է խելագարութեան ակտ, որ ոչ մի արդարացում չունի։

◆ «У. Р.»-ում պրօֆ. Օզէրովը ասում է. «Թիւրքիայի հետ պատերազմը երկար ժամանակով կը կանգնեցնէ մեր արտաքին առևտուրը։ Յետոյ կընկնէ և նոյնիսկ կանգ կառնէ առևտուրը Պարսկաստանի հետ։ Սակայն, չը նայած պատերազմի այդ հետևանքների ծանրութեանը, անհրաժեշտ է վերջ դնել գանգրէնին։ Վաղ թէ ուշ պէտք էր պատերազմի դիմել»։

◆ Ռուս-Թիւրքական պատերազմի առիթով Պետական Դումայի անդամ իշխ. Գէլօվանին հետևեալն է ասել «Гол. Москвы»-ի աշխատակցին. «Կովկասի բոլոր ցեղերը ցոյց կը տան այժմ, թէ որ աստիճանի նրանք լօյեալ են։ Ժամանակը հասել է ցրելու նրանց սեպարատիզմի պատրանքը։ Մեր յօժարակամ խմբերը միայն նշանի են սպասում Թիւրքիայի վրա յարձակվելու համար»։

◆ Պետական Դումայի անդամ Ջաֆարովը ասել է. «Բովանդակ ռուս ժողովրդի հետ միասին մենք հաւատում ենք Ռուսաստանի յաղթութեանը։ Կովկասի ազգաբնակութիւնը գիտէր այս պատերազմի մասին և պատրաստվում էր նրա համար»։

◆ Սենատոր Նիկօլսկին «Бирж. Вѣд.»-ի աշխատակցին այն կարծիքն է յայտնել, թէ ռուս-Թիւրքական պատերազմում առաջին հարուածը ընդունելու է Վրաստանը (?). ինչ վերաբերում է ազգային հարցին, վաղեմի թշնամութիւնը Կովկասի մի քանի ազգութիւնների միջև այժմ, սենատորի կարծիքով, բոլորովին չքացել է և ամեն տեղ նըկատելի է միաբանութիւն։

◆ Մոսկվայաբնակ բանաստեղծ Ալ. Ծատուրեանը «У. Р.»-ի աշխատակցի հետ խօսելիս ասել է, որ ռուսահայերը եռանդուն ցանկութիւն ունեն մասնակցելու պատերազմին։

◆ «Р. В.»-ի պատերազմական թղթակիցը Թիւրք զօրքերի թիւը հաշւում է կէս միլիօն մարդ։ Կովկասեան սահմանը Թիւրքիան կուղարկէ միայն մի մասը իր զօրքերից։ Փոքր Ասիայի պատերազմաբեմը Թիւրքիայի կողմից պաշտպանված չէ։ Թիւրքիան իր ռազմի գործողութիւնները չէ կարող սկսել գարնանից վաղ։ Համենայն դէպս՝ կովկասեան սահմանի համար մենք կարող ենք անպայման հանգիստ լինել։ Թիւրքաց նաւատորմը, նոյն իսկ «Գեբէնի» գլխաւորութեամբ, ընդունակ է միայն ռազմագիտական անզգամութեան։

◆ «У. Р.»-ի զինւորական նկարագրողը կարծում է, որ Թիւրքիան կարող է ռուսական սահմանում հանել 8 զօրաբանակ, այսինքն 320,000 զինւոր։ Թիւրք զօրքի դրութիւնը Փոքր Ասիայում նախանձելի չէ։ «Մենք ունենք միանգամայն լրիւ ոյժեր օսմանեան ոյժերի յարձակումը ի չիք դարձնելու համար»։

◆ «Время» լրագրում տպված է Տօւօմեանի հետ եղած զրոյցը, որ նորերս վերադարձաւ Թիւրքահայաստանից։ Տօւօմեանը յայտնել է, որ Թիւրքիայում ճանապարհներ համարեա չը կան։ Ապրանքներ կարելի է տեղափոխել միայն ձիերով ու սայլերով։ Զօրքերին մի տեղից միւսը փոխադրելը, ինչպէս այդ արվում է եւրոպական պատերազմաբեմում, անկարելի է։ Անկարելի է նաև կենսական մթերքների ներմուծումը և վիրաւորներին կռւի դաշտից տանելը։ Պատերազմի դէպքում համաճարակներն անխուսափելի են։ Հայաստանում մնալ Թիւրքիան կարող է միմիայն իր զօրքի կէսով, որ անզօր է մեր կովկասեան քաջ զօրքերի դէմ։ Քրիստոնեայ տարրը անյուսալի է։ Անկասկած Թիւրքաց զօրքի կազմից քրիստոնեայ զինւորները խմբերով դասալիք կը լինեն։ Ներկայումս Հայաստանում արդէն ձիւն է եկել և այդ հանգամանքը արգելք կը լինի դէպի Էրզրում շարժվելուն ձախ զօրաթևի կողմից։ Աւելի շուտ զօրքերը կանցնեն Տրապիզոնով։ Պատերազմի ելքը ահագին նշանակութիւն կունենայ Ռուսաստանի համար։ Թիւրքական նահանգների միացումը ահագին օգուտներ կը տայ։ Հայաստանը հարուստ է նաւթով և հանքային հարստութիւններով։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ Բարեբաղդաբար Պետ. Դումայի անդամ Մակլակօվի սպանութեան տեղեկութիւնը հերքվում է։

◆ Կիէվի բժշկական ֆակուլտէտի 20 պրօֆեսօր հարց են յարուցել խնդրել Թագաւոր Կայսրից ընդմիշտ արգելելու օղու վաճառումը Ռուսաստանում։

◆ «Կուլտուրա» ընկերութեան բոլոր դրամագլուխների վրա արգելք է դրված։ Այդ ընկերութիւնը պատկանում է գերմանական Մէյեր ֆիրմային և, ինչպէս յայտնի է, ռուսական բազմաթիւ քաղաքներում գրավաճառութեամբ էր զբաղվում։

◆ Ֆօր-դէր-Գօլց-փաշային հրաժարեցրել են Բելգիայի գեն.-նահանգապետի պաշտօնից՝ չափազանց մեղմ կառավարութեան համար։

◆ Անատոլ Ֆրանսը նշանակվել է Վէրսալի բերդապետ։

◆ Բելգիացի սօցիալիստների լիդէր Վանդերվէլդէն պրեմիէր-մինիստր Բրօկվիլէի հետ մեկնել է բելգիացի կռւող զօրքերին օգնելու համար։

◆ Ռուսաստանը վճռել է պաշտպանել Յունաստանին Եպիրոսը գրաւելու հարցում։

◆ «Н. Вр.»-ի ասելով, Պարսկաստանի սահմանում ռուս զօրամասի ձեռքով սպանվեցին 150 քիւրդ, որոնց գիւղերը քարուքանդ են արված։ Սակայն շատ քիւրդեր կարողացել են փախչել Թիւրքիա և այնտեղ նոր հրոսակախմբեր են կազմում։

◆ Կիէվ են տարել մեծ թւով Թիւրքերի բօսնիական գնդերից։

◆ Բուխարեստից հեռագրում են. «Բուկովինայում մեծ ճակատամարտ է ռուսների և աւստրիացիների միջև. ազգաբնակութիւնը սարսափահար փախչում է Ռումինիա»։

◆ Պերեմիշլի մօտ գերմանացիք բռնել են ուժեղ դիրքեր։ Այնտեղ տեղի է ունենալու ահեղ ճակատամարտ։

◆ Գերմանիայի պահանջով՝ իտալական և շվէյցարական սահմաններում գտնվող աւստրիական զօրքերը փոխադրված են գալիցիական պատերազմաբեմը։

◆ Կօպէնհագէնից հեռագրում են, որ Իզերեան նեղուցում խեղդվել են 2500 գերմանացի։

◆ Սազօնօվը կարևոր խորհրդակցութիւն ունեցաւ երրեակ համաձայնութեան պետութիւնների դեսպանների հետ։

◆ Գերմանական զօրքերը շտապով նահանջում են դէպի Նամիւր և Լիէժ։ Անգլիական ռազմանաւերը կրակեցին գերմանական դիրքերի վրա և ստիպեցին գերմանացիներին նահանջել հեռու դէպի արևելք։

◆ Շահը գահաժառանգ Հուսէյն պրինցի և իր շքախմբի ուղեկցութեամբ այցելեց ռուսական դեսպան Կօրօստօվէցին նրա ամառային բնակավայրում։

◆ Կ. Պօլսում մի Թիւրք գեներալ գնդակահարել է փողոցում գերմանացի մի օֆիցէր՝ պատիւ չը տալուն համար։

◆ Կ. Պօլսից հեռագրում են, թէ իբր գահաժառանգը կազմակերպում է մահափորձ գեներալ Սանդէրսի կեանքի դէմ։

◆ Պետրօգրադում երկարատև խորհրդակցութիւններ են տեղի ունենում արտաքին գործերի մինիստր Սազօնօվի և իտալական ու ռումինական դեսպանների միջև։ Բոլորի աչքերը այժմ յառած են Բօլգարիայի վրա, թէ նա ինչ դիրք կը բռնէ այս խորհրդաւոր րօպէին։ Յունաստանը միանում է Ռուսաստանին ընդդէմ Թիւրքիայի։

◆ Կ. Պօլսից տեղեկացնում են, որ Գերմանիան ամենակտրուկ կերպով և լուրջ սպառնալիքով ստիպեց Թիւրքիային պատերազմ յայտարարել Ռուսաստանին։

◆ Մոսկվայի հայ գաղութը հայ կամաւորների մի խումբ է կազմակերպում Թիւրքիայի դէմ։

◆ Կ. Պօլսում Թիւրքաց մինիստրների կաբինէտը նիստեր է գումարում առանց ընդմիջումների։ Դրութիւնը սարսափելի է դառնում։ Մինիստրները գործիք են բառիս բուն նշանակութեամբ գերմանական դեսպան Վագենհէյմի ձեռքում, որ տիրել է նրանց։

◆ Կ. Պօլսում յուսահատական դրութիւն է։ Ահ ու սարսափ է հայերի շրջաններում։ Երիտասարդ-Թիւրքերի գործակալները փողոցներում քարոզում են սրբազան պատերազմ, աղաղակելով «մահ բոլոր քրիստոնեաներին». հայ ազգաբնակութիւնը ապաստանում է առայժմ անգլիական և ֆրանսիական դեսպանատներում և հայոց պատրիարքարանում։

◆ Կ. Պօլսում խուժանական ցոյցեր են քրիստոնեաների դէմ։ Հոճաները համիսլամական պրօպագանդա են մղում։ Փողոցները լի են զօրքերով և անթիւ ոստիկաններով։ Եւրոպացիք փախչում են։

◆ Օդեսսայի մօտ ռուս ռազմանաւերն ընկան Թիւրքաց ականանաւերի հետևից։

«Օդեսսայում Թիւրքաց ռազմանաւերից նետած ռումբերից մինն ընկաւ շաքարի գործարանը, միւսը՝ էլեկտրական կայարանը։ Գործարանում վիրաւորեցին 2 բանւոր. կայարանում աշխատանքները առժամանակ դադարեցված են։

◆ Օդեսսայի մօտ Թիւրքաց ականանաւը ջրասոյզ արեց «Դոնեց» ռազմանաւին։

◆ Պետրօգրադից հեռագրում են, որ Ռուսաստանը պատերազմ յայտարարեց Թիւրքիային իր առաջադրած ուլտիմատումին պատասխան չը ստանալուց յետոյ։ Ուլտիմատումը պահանջում էր ոչնչացնել «Գեբէնը» և «Բրէսլաուն», թոյլ տալ անգլօ-ֆրանսիական և ռուսական նաւերին անցնել Դարդանէլով, վճարել բոլոր այն վնասները, որոնք եղան Թիւրքերի հանդէս գալուց։ Պատասխանի համար տրված էր մինչև հոկտ. 18-ի երեկ. ժ. 6-ը։

ՎԻՐԱՒՈՐ ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐՆԵՐ

Մեզ հաղորդում են, որ ներկայումս Վարշավայի հիւանդանոցում են գտնվում ղարադաղեցի (Գանձակի նահանգ) հետևեալ զինւորները վիրաւոր դրութեան մէջ.

1) Բախշի Տէր-Առաքելեան՝ վիրաւորված ձեռքից. 2—3) Նիկ. և Մինաս Առաքելեանները (եղբայրները), որոնցից առաջինը վիրաւորված է ճակատից և բազուկներից, իսկ միւսը ձախ ձեռքից, 4) Սիմէօն Պօղոսեան՝ փորից։

Նոյն գիւղացի զինւոր Սեդրակ Սահակեան անհետ կորած է, իսկ Սոկրատ Արզումանեան՝ սպանված։

Պետրօգրադից վիրաւոր զինւոր Արսէն Հայրումեանից ստացել ենք մի նամակ, թւագրված հոկտ. 10-ից, ուր, ի միջի այլոց, յիշվում են իր մասնակցած կռիւներում—որոնք տեղի են ունեցել սեպտեմբերի ընթացքում Սուվալկի շրջանում—վիրաւորված մի քանի հայերի անունները, որոնք հետևեալներն են.

1) Ինքը նամակագիր Արսէն Հայրումեան՝ դօլօրսեցի. 2) Անդրէաս Սահակեան՝ խնձորեսկցի, 3) Յովսէփ Գաբրիէլեան՝ քարաշէնցի. 4) Ջալալ Պետրոսեան՝ դօլանլարեցի. 5) Յովհ. Տէր-Յակօբեան՝ երևանցի և 6) Սեդրակ Մանուկեան՝ երևանցի։

Նամակագիր Արսէն Հայրումեանի մեզ գրած իր նամակը վերջանում է հետևեալ տողերով. «Մենք՝ վիրաւոր զինւորներս՝ այժմ գտնվում ենք այստեղ՝ Պետրօգրադում մի պրօֆեսօրի տանը։ Մեզ շատ լաւ են նայում։ Մեզ՝ մտաբերողները թող հանգիստ լինեն։ Բոլորիս վէրքերն էլ անվնաս են»։

ՍՈՒԼԹԱՆՆԵՐՈՒ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԷՆ

Կ. Պօլիս, 26 սեպտեմբեր

Աշնան սկզբնաւորութեան հետ սկսան անձրևները։ Խեղճ զինուորները, որ լեռներուն և դաշտերուն մէջ անպատսպար կը մնան, առանց սնունդի ու հագուստի, պարտաւորուած են կրել ծանր տառապանքներ ու մեծ նեղութիւններ։

Թէև բանակէն գաղտ նամակներ գրելն արգիլուած է, սակայն արձակուրդ առնելով իրենց ծնողքին քով եկող զինուորներէն առնուած տեղեկութիւնները Թիւրք բանակին կազմակերպութեան և սնունդին մասին՝ պարզապէս ողբալի են։

Խստութիւնն ալ ծայրայեղ է։ Ոևէ դժգոհութեան արտայայտութիւն, ոևէ բողոք կը պատժուի խստիւ, որով խեղճերը համակերպիլ աւելի կը նախընտրեն, քան թէ պայքարիլ։

Իսկ զինուորներու ընտանիքներուն ենթարկուած վիճակը աւելի ծանր է ու աւելի դառն։

Աննեցուկ ու անպաշտպան ընտանիքներուն համար օրէնքով որոշուած նպաստը, որ կառավարութիւնը պէտք էր հատուցանել, դեռ չէ տրուած և տրուելիք ալ չունի։

Զէնքի տակ բոլոր քաղաքացիները կոչելու հետամուտ կառավարութիւն մը նոյնքան ալ պարտաւոր ըլլալու էր իր փչացուցած ընտանիքներուն գէթ չոր հացի մը դրամ տալու։ Սակայն ասոնց վրայ խորհող չկայ։ Թիւրք կառավարութիւնը միայն առնել գիտէ, տալ ոչ։

Հետևաբար ծանրացող խեղճութեան դարման տանելու գործը դարձեալ ինկած է ազգութեանց ներքին կազմակերպութեան վրայ։ Այս տագնապալի շրջանին անհնարին դժուարութիւններ կան սակայն նպաստ հաւաքելու, ուստի ազգային իշխանութիւնները մեծ դժուարութիւններ կը քաշեն հայ ընտանիքներու օրապահիկն հայթայթելու համար։

Պատրիարքարանը չփոխած վիճակ մը

ունի։ Դրամ ալ չկայ արդէն հրապարակին վրայ։ Ազգային հաստատութեանց դրամները բանկերէն առնել կարելի չէ, որով փոխատուութիւններ ալ ընելու վիճակի մէջ չէ պատրիարքարանը նպաստամատոյց մարմիններու։

Ազգ. վարժարանները ամենամեծ դժուարութեամբ և գրեթէ կէս առ կէս գոցուած բիւջէներով կը վերաբացուին աւելի կամ նուազ կանոնաւորութեամբ, սակայն ոչ ոք կրնայ երաշխաւորել անոնց տևականութիւնը, որ շատ կասկածելի է, վասնզի թօշակներէն և կալուածներէն, գանձումներ ընելն անկարելի դարձած է։

Մասնաւոր վարժարաններն ալ բացուեցան, սակայն մի քանիները չկրցան շարունակել։

Չենք գիտեր թէ այս ծանր վիճակը դեռ որքան պիտի տևէ։ Հայորդի

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՂԹԱՆՔ

Այսօր Երևանեան հրապարակի վրա նշանակված է ընդհանուր մաղթանք՝ պարգևելու ռուսական զէնքին յաղթութիւն ընդդէմ Թիւրքիայի։

Մաղթանք է կատարվելու և հայոց Վանքի մայր եկեղեցում։

Ոչ մի տարակոյս չը կայ, որ քաղաքիս հայ ազգաբնակութիւնը կը շտապէ եկեղեցի՝ ջերմ աղօթք վերառաքելու Բարձրեալին ռուսական զէնքին յաղթութիւն շնորհելու համար, քանի որ թիւրքական զօրքերը սպառնում են Կովկասին, ուրեմն և մեզ ռուսահայերիս, և քանի որ ռուսական զէնքի յաղթութեամբ է պայմանաւորված և մեր բազմաչարչար Հայաստանի ազատութիւնը։

ԴՈՒՄԱՅԻ ԱՐՏԱԿԱՐԳ ՆԻՍՏԸ

(Հոկտեմբերի 19-ին)

Պատմական խոշոր մոմենտի նախօրեակին Թիֆլիսի քաղաքային դուման արտակարգ նիստի էր հրաւիրված։

Ժամը 8-ից դահլիճը արդէն լցված էր երկսեռ հանդիսականներով. վերնատանում այլևս տեղ չը կար. դահլիճի մուտքի առաջ ահագին բազմութիւն էր հաւաքվել, շատերը մնացել էին միջանցքում։ Լրագրական ռէպորտեօրների սեղանի շուրջը տեղ էին գրաւել տեղական թերթերի ներկայացուցիչները։

Դահլիճը զարդարված էր եռագոյն դրօշակներով և կանաչ դրասանգներով։

Նախագահական սեղանի ետևում և առջևում շարված էին աթոռներ ու արդէն բռնըված հասարակական գործիչներով։ Նոյնիսկ իրաւասուների վերջին շարքերի ետևում տեղ էին բռնել հանդիսականները ոտքի կանգնած։

Ժամը 8 և 40 րոպէին ներս մտան քաղաքագլուխն ու վարչութիւնը իր ամբողջ կազմով։ Իրաւասուները շտապեցին իրանց տեղերը։

Խորհրդաւոր լռութեան մէջ քաղաքագլուխ Ա. Ի. Խատիսեան ոտքի է կանգնում և արտասանում ներկայ մոմենտին համապատասխան մի ոգևորված ճառ, որի ամբողջութիւնը մենք կը տանք յաջորդ համարում միացեալ բոլոր հռետորների ճառերի հետ միասին։

Քաղաքագլխի ճառից յետոյ խօսեցին իրաւասուներ Ալէքսէյեվ-Մեսխիէվ, Ի. Մ. Դոլուխանեան, ուսուցիչ Հասան-զադէ, իրաւասուներ Վեսելովզորով և Միտկեվիչ։

Ճառախօսութիւններից յետոյ քաղաքագլուխը քուէարկութեան դրեց վարչութեան առաջարկը. դուման միաձայն ընդունեց այդ առաջարկի առիթով հետևեալ բանաձևը.

«Ն. Կ. Մ. Կովկասեան Փոխարքայի միջոցով արտայայտել Թագաւոր Կայսրին Թիֆլիսի քաղաքային ինքնավարութեան և քաղաքի ազգաբնակութեան կողմից Թիւրքիայի դէմ պատերազմական գործողութիւններ սկսելու առիթով ազգաբնակութեան պատրաստակամութիւնը ամեն տեսակ զոհաբերութիւն անելու թշնամուն յաղթելու և պատերազմի զոհերին պատսպարելու համար։ Որոշվում է հոկտեմբերի 21-ին համաժողովրդական մաղթանք կատարել Երևանեան հրապարակի վրա ռուսաց զէնքին յաղթութիւն պարգևելու համար և լիազօրել քաղաքագլխին յատուկ պատգամաւորութեամբ զեկուցանել Փոխարքային դումայի կայացրած այդ որոշման մասին»։

Դումայի այդօրվայ արտակարգ պատմական նիստը փակվեց մի ժամ տևելուց յետոյ, «Կեցցէ հայրենիք Ռուսաստանը և Կովկասի ազգերի համերաշխութիւնը» բացագանչութիւններով և ուռաներով։

ՓՈԽԱՐՔԱՅԻ ՃԱՌԸ

Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի Փոխարքայ կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկովի ճառը ի պատասխանի քաղ. դումայի պատգամաւորութեան զեկուցման.

Ես մի վայրկեան չէի կասկածում Թիֆլիս քաղաքի տրամադրութեան մասին, և ես շատ ուրախ եմ տեսնելու ձեզ և այդ ամենը լսելու. ես անմիջապէս ի կատար կածեմ ձեր ցանկութիւնը և կը հասցնեմ ի գիտութիւն Թագաւորի ձեր զգացմունքների մասին, թէև պէտք է ասել, որ այդ հաղորդագրութեամբ ես Նրան ամենևին չեմ զարմացնի, որովհետև Նա Ինքն էլ շատ լաւ գիտէ ձեզ ոգևորող զգացմունքների մասին։ Թիւրքիան մեր վաղեմի թշնամին է. մենք շատ անգամ, յաճախ և երկար ժամանակ պատերազմել ենք նրա հետ, սակայն այս պատերազմը շատ աւելի դիւրին կը լինի միւսներից, որովհետև մեր աջողութիւնները արևմուտքում ցոյց տուին մեր ոյժը. ես գիտեմ, որ տարաձայնութիւնները ձեր մէջ հարթվեցին, և, ի հարկէ, նրանք այլ ևս չեն էլ լինի պատերազմից յետոյ։

«ՍՊԻՏԱԿԵՂԷՆԻ ՇԱԲԱԹՎԱՑ» ԱՌԱՋԻՆ ՕՐԸ

«Սպիտակեղէնի շաբաթվայ» առաջին օրը անցաւ շատ աջող և արդիւնաւէտ։ Իրեք հաւաքող սայլակները այդ օրը շրջեցին 1-ին 2-դ, 3 դ, 4-դ, 5-դ և 6-դ ոստիկանական թաղամասերը։ Չը նայած անձրևային եղանակին՝ նրանք գործում էին եռանդով, այնպէս որ միայն 1-ին թաղամասում հաւաքումը վերջացաւ ժամը 1-ին։ Ստացված արդիւնքը սպասածից աւելի էր։ Հասարակութիւնը անպայման սրտանուէր վերաբերմունք էր ցոյց տալիս գործին, որ միայն հիացմունքի է արժանի։ Հէնց որ փողոցում լսվում էր առաջնորդ սայլակավարի փողի ձայնը, բնակիչները կապոցներով դուրս էին թափվում տներից և սայլակների մէջ լցնում իրանց նուէրները։

Նուէրները բազմաթիւ են ու բազմազան։ Առաջին քաղաքամասում նուիրել են մահճակալներ, սամովարներ, կարի մեքենայ, արկղներ, սպիտակեղէնի բազմաթիւ կապոցներ, որոնք դեռ չեն բացված, առանձին փոքրիկ տոպրակներով ծխախոտ, լուցկի, ծխախոտի թուղթ, նամակի ծրարներ թղթերով, կօշիկներ, մուշտակներ, վերարկուներ և այլն։ Միւս քաղաքամասերի նուէրներն էլ նոյն տեսակի են և աչքի են ընկնում նոյն առատութեամբ։ Ուշագրաւ է այն հանգամանքը, որ չունևորները աւելի լաւ վերաբերմունք էին ցոյց տալիս։

Շատերը իրանց իրերի վրա գրել են զանազան մակագրութիւններ։ Այսպէս օրինակ՝ մէկը գրում է. «Чѣмъ богатъ, тѣмъ и радъ». Պատահում են ուշագրաւ կապոցներ մակագրութեամբ՝ «Дорогому солдатику на войну». Մի ուրիշ երեխայ նուիրել է իր փոքրիկ սուրը մակագրութեամբ՝ «Даю свою шашку для развлеченія сиротъ воиновъ»։ Վէրայի տարրական դպրոցի աշակերտուհիներից մէկը նուիրել է իր ձեռագործ շարֆը։ Նուէրների մէջ պատահում էին մուրաբա, շօկոլադ, կակաօ, սուրճ, վերմիշել, մակարօն, լօբի, բրինձ, մատիտներ, գրիչներ, բացիկներ, գիւղական տաք գուլպաներ, գրքեր, շաբաթաթերթեր, հեռագիրներ և լրագիրներ։ Եղել են նաև կոճակ, ասեղ, սապօն, շաքար, թէյ և այլն։ Իրեք հաւաքող սայլակներից մէկի վրա գրված էր՝ «Дорога въ Берлинъ».

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Նահանգապետը թոյլատրել է կայսերական թատրոնների նախկին դերասան Ֆ. Վ. Ռագոլինին ամսիս 29-ին Արտիստական Ընկ. դահլիճում բարեգործական մեծ ներկայացում-համերգ կազմելու բէլգիական ընտանիքների օգտին, որոնք վնասվել են ներկայ պատերազմից։ Երեկոյթի կարգադրիչը լինելու է բէլգիական հիւպատոս Ա. դը Մօրկուր։

◆ Կովկասի Տնայնագործական Կոմիտէտի բրդի թելերի գործարանը ձեռնարկել է զօրքի համար փափուկ իրեր, ձեռնոցներ և այլն պատրաստելու։

◆ Քաղաքագլուխը դիմել է Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուին, խնդրելով Հալաբարի պրոգիմնազիայի շէնքը, որ հիւանդանոցի է վերածված, փոխարինել օրիորդաց 8-դ գիմնազիայով կամ ուսուցչական ինստիտուտով։

◆ Ստաւրոպոլի զեմստվային վարչութիւնը Կովկասի քաղաքների միութեան բիւրօյին փոխադրել է 500 ր.՝ բիւրօյի դիւանական և անդամների ճանապարհորդութեան ծախքերի համար։

◆ Էլեկտրաքարշի դիրեկցիան պատերազմից վնասվածներին օգնող քաղ. կենտր. կոմիտէտին է յանձնել 225 ր. 10 կոպ., որ ստացվել է հոկտ. 17-ին բաժանորդատոմսեր վաճառելուց։

◆ Նահանգապետը թոյլատրել է ասորական դրամատիկական միութեանը հոկտեմբերի 23-ին Ժողովրդական Տանը մի ներկայացում տալ, որի եկամուտը տրվելու է պատերազմից վնասվածներին օգնող Թիֆլիսի կոմիտէին։

◆ Հայոց Դրամատ. Ընկեր. ընդհանուր ժողովի շարունակութիւնը, որ նշանակված էր կիրակի, հոկտ. 19-ին, դումայի դահլիճում, չը կայացաւ և յետաձգվեց յաջորդ կիրակի, հոկտ. 26-ին։

◆ Փայտավաճառները դիմել են քաղ. վարչութեան, խնդրելով կամ բոլորովին վերացնել փայտի սակագինը կամ նոր սակագին սահմանելու համար առանձին խառը յանձնաժողով կազմել։

◆ Նահանգապետը Մարիամ Երիցեանին թոյլատրել է Թիֆլիսում գրական-գեղարուեստական պատկերազարդ շաբաթաթերթ հրատարակել՝ հայերէն և ռուսերէն լեզուներով և «Скандалъ—Խաթաբալա» անունով։

◆ Ոգելից խմիչքներ վաճառելու համար նահանգապետը տուգանքի է ենթարկել ռեստորանատէր Գրիգոր Յարութիւնեանին 500 ր. կամ 1 ամիս բանտարկութեան և խանութպան Բագրատ Մարգարեանին 100 ր. կամ մի ամիս բանտարկութեան։

ԿՈՎԿԱՍ

◆ Բաթումից հեռագրում են հոկտ. 19-ից. «Տեղս ժամանեց Բաթումի գիմնազիան իր դասատուների և աշակերտների ամբողջ կազմով, որ տեղաւորվեց տեղական գիմնազիայի շէնքում։ Ճանապարհին են և շուտով այստեղ կը հասնեն աղջկանց գիմնազիան և քաղ. դպրոցները։ Սպասվում են Սուխումի և Փոթիի դպրոցները։ Տեղական գիմնազիայի սենեակներից շատերը յատկացված են ննջարանի։ Եկել են ծովափնեայ քաղաքների բազմաթիւ բնակիչներ»։

◆ Ղարադաղլու գիւղից (Գանձակի նահ.) մեզ գրում են հետևեալը. «Գիւղումս կայ երկու դպրոց՝ ծխական և տարրական, որոնք նիւթականի կողմից հոգեվարք դրութեան մէջ են։ Գիւղը զուրկ է սեփական քահանայից։ Մի ինտելիգենտ և զարգացած քահանայ մեր թէ գիւղական գործերի համար ընդհանրապէս և թէ դպրոցների համար մասնաւորապէս ամենամեծ բարիք կը լինէր»։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Օպէրա

I

Չայկովսկիի մելօդիաներով հարուստ «Пиковая дама» օպէրան, որ ներկայացվեց երկրորդ անգամը այս սէզօնին՝ շաբաթ, հոկտեմբերի 18-ին, անցաւ ընդհանուր առմամբ գունատ։

Բօգլինսկիի հիւանդութեան պատճառով Գէրմանի կենտրոնական պարտիայում հանդէս էր եկել Միխայլով, որը թէ ձայնական և թէ բեմական կողմից թողեց խիստ սառը տպաւորութիւն։ Պարտիտուրայի գեղագանց նոմէրներից շատերը արտիստի կողմից կատարվեցին առանց զգացմունքի. օրինակ՝ երկրորդ տեսարանի մելօդիական ռէչիտատիվը՝ «Прости, небесное созданіе», որ երգում է Գէրմանը Լիզայի սենեակում, Միխայլովի կատարումով անցաւ միանգամայն աննկատելի։ Ակներև էր արտիստի անփորձառու լինելը Գէրմանի դերում։

Երգչուհի Դէ-Վինչի, որ ունի ծաւալով ոչ սահմանափակ և ախորժալուր սօպրանօ ձայն, Լիզայի պատասխանատու պարտիայում ձայնական կողմից ցանկալի աջողութիւնը ունեցաւ. սակայն նոյնը չենք կարող ասել խաղի մասին, որ համարեա թէ զուրկ էր դրամատիզմից և զգացմունքներից, որի շնորհիւ և Դէ-Վինչիի հանդէս բերած Լիզան թողեց փայտացած էակի տպաւորութիւն։

Սիրուն Պոլինա էր տ. Կովլեկովա։

Շատ աջող էր այդ երեկոյ Նիկոլսկի կոմս Տօմսկիի պարտիայում։ Երգչի ձայնը հնչում էր լիառատ և գեղեցիկ։ Հասարակութիւնը երկարատև ծափահարում էր նրան։

Լիւբչէնկօ, որ ստանձնել էր իշխան Ելէցկիի դերը, հմտօրէն կատարեց նրան։ Բաւական զգացմունքով երգեց իշխանի արիան՝ «Я васъ люблю».

Կոմսուհու պարտիան մեծ ճաշակով երգեց Եւգէնիէվա։ Արտիստուհու բեմականը ևս կարելի էր բաւարար համարել։

Խօրի երգեցողութեան ընթացքում նկատելի էին որոշ շեղումներ։

Օպէրան ղեկավարում էր դիրիժեօր Գէսս, որը, ինչպէս երևում էր, ջանք չէր խնայում Չայկովսկիի այդ գեղեցիկ ստեղծագործութիւնը տապալումից փրկելու։

Թատրոնը կիսով չափ լի էր։ X.

II

Կիրակի, հոկտեմբերի 19-ին, Արքունական թատրոնում օպերային խումբը ներկայացրեց «Բօրիս Գօդունովը»։

Ներկայացումից առաջ օրկէստրը հասարակութեան պահանջով նուագեց երեք անգամ ազգային օրհներգը խմբի մասնակցութեամբ։

Ներկայացումը այս անգամ էլ անցաւ հարթ։ Բօրիսի կենտրոնական դերը վերին աստիճանի մտածված ու պատկերաւոր կերպով տարաւ Զալէվսկին։ Այդ դերը նրա աջող ռէպէրտուարից մէկն է անշուշտ։

Միւս դերակատարները նոյնպէս խմբի լաւ ոյժերից էին, օրինակ Զալիպսկի (Դիմիտրի), Իւչէնկով (Շույսկի), Մակսիմովա (Մարիա), Շվեց, Լիւբչէնկօ և այլն։

Այսօր կը ներկայացվի «Հուգէնօտները»։ Ե.

Ժողովրդական Տուն

Հանգուցեալ Մուրացանի «Ռուզանը», որ հոկտեմբերի 18-ին ներկայացվեց Ժողովրդական Տանը, պէտք է ասած, անցաւ թոյլ. եթէ ասենք, որ պիէսի ընթերցումը մեզ վրա աւելի տպաւորութիւն է թողել, քան այդ ներկայացումը, մեր ասելիքը աւելի պարզ կը լինի։

Դերակատարների մէջ միայն Յասմիկն էր, որ ուշադրութիւն էր հրաւիրում իր շնորհալի խաղով։ Բայց մի ձեռքով ծափ չեն տայ, մի մարդով հարսանիք չի լինի։ Որքան էլ Յասմիկը աշխատէր լաւ խաղալ, այնուամենայնիւ չէր կարող անել այն, ինչ որ ցանկալի էր։

Իշխանների դերակատարներից գրեթէ ոչ մէկը իշխանական հպարտութիւն և վեհութիւն չը ցուցադրեց։ Անգամ շնորհալի Գաւրօշը (Հասան-Ջալալ) թոյլ էր։ Միւսները աւելի տարօրինակ կերպով էին ներկայացնում իշխաններին։ Պ. Յարութիւնեան II (Համտուն) այնպիսի անհամապատասխան շարժումներ էր անում ձեռքերով, որ չէր սազում իր դերին։ Իսկ պ. Լեռնի (Պապակ) իր դիրքով ու կեցուածքով խոհարարի էր նմանում։ Իշխաններից միայն մէկը՝ պ. Բէգլիջանեան (Սմբատ), կարելի է ասել՝ բաւարար էր։ Պարոնը բնական ձայն և շարժումներ ունի, որոնք համապատասխանում են իր արտայայտած խօսքերին։

Ջօլայի դերում վատ չէր պ. Աղաբաբեան։

Վերջին գործողութեան մէջ, մեզ միանգամայն տարօրինակ թւաց հայոց զինուորներին հրդեհաշէջների գլխարկով տեսնել։

Այս անգամ ևս պարտաւորութիւն ենք զգում նկատելու, որ յուշարարի ձայնը խանգարում է լսել դերասանների խօսակցութիւնը։

Ինչպէս միշտ, այս անգամ ևս թատրոնը լի էր։ Ս. Բ.

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Հայոց ներկայացում Նոր Բագւում

Ս. Բէնէլլիի «Ծաղրանքի ընթրիքը»

Բագու, 17 հոկտ.

Հայոց չորրորդ ներկայացման բեմ հանվեց «Ծաղրանքի ընթրիքը», որ թարգմանել է Վահրամ Փափազեան։ Պիէսը իտալացի հեղինակի գործ է և հոկտեմբերի 16-ին առաջին անգամն էր խաղացվում հայոց բեմի վրա։ Իտալացի հեղինակը իր ստեղծագործութեամբ մեզ տեղափոխում է միջին դարերը, երբ Ֆլօրենցիայում տիրում էր Մեդիչիների հռչակաւոր ընտանիքը։ Պիէսը նա ի զուր է «Ծաղրանքի ընթրիք» անուանել։ Մեր կարծիքով նրան աւելի պատշաճ է «Մղձաւանջ» կոչումը։ Եւ դա այն պատճառով, որ պիէսի ամբողջ բովանդակութիւնը մղձաւանջային է։ Իտալացի հեղինակը մի նոր առեղծուած չի շօշափում իր գործում. սէրն է, որ գժտութիւնների աղբիւր է դառնում այդ պիէսում, սէրն է, այդ՝ ըստ Հէյնէի «յաւիտեան կենդանի զառամ հէքիաթը», որ իրար դէմ է ծառացնում Ֆլօրենցիայի քաղաքացիներ Ջիանէթթօ Մալէսբինիին և Նէրի Քիարամանթէզիին։ Այդ երկուսի սիրոյ առարկան Ջինեվրան է, որը գործողութեան սկզբում պատկանում է Նէրիին և որի համար Ջիանէթթօն տառապանքներ է կրել Նէրիից և նրա կրտսեր եղբայր Գաբբրիէլլօյից։ Վերջինս նոյնպէս սիրում է Ջինեվրային, սակայն աշխատում է հեռու մնալ մեծ եղբօր սիրուհուց և ցաւ չը պատճառել հարազատին։ Ջիանէթթօյին աջողվում է ծուղակի մէջ գցել Նէրիին և նրան խելագար յայտարարելով՝ կապտել և բժշկի հսկողութեան տակ դնել։ Այդպէս անզօր դարձնելով իր ախոյանին՝ նա այցելում է Ջինեվրային և վայելում նրա սէրը։ Ապա Ջիանէթթօն սկսում է հոգեկան տանջանքներ պատճառել իր կապկպած ուժեղ թշնամուն։ Նրան տանջում է իմաստակ միջնադարեան բժիշկը իր հոգեկան հիւանդութիւնների մասին ունեցած սնոտի հասկացողութիւններով։ Գալիս են նրան տանջանք պատճառելու և այն բոլոր մարդիկ, որոնք վիրաւորանքներ են կրել և անզօր են եղել Նէրիի ազատ օրերին վրէժխնդիր լինելու։ Այդ կարգի անձնաւորութիւն է ծերունի Թուռնքա, որի սիրուհուն խլել է Նէրին։ Այդ կարգի մարդիկ են Լիզաբէթթա, Լաւդոմինէ և Ֆիամմեթթա աղջիկները, որոնց Նէրին գայթակղեցրել է, որոնցից նա օգտվել է և ապա թողել։ Խելագար հռչակված Նէրին իրան պահում է յանդուգն, նա սպառնալիքներ է կարդում իր թշնամի Ջիանէթթօյին և շրջապատին։ Սակայն Նէրիի թշնամիները բոլորն էլ անգութ չեն։ Նրա նախկին սիրուհի Լիզաբէթթան դեռ շարունակում է սիրել իրան անպատուողին և նա խորհուրդ է տալիս Նէրիին խոնարհվել, խելագար ձևանալ և այդպիսով ազատվել թշնամու կապանքներից։ Նէրին համակերպվում է։ Ջիանէթթօն նրան բաց է թողնում և երեսին յայտարարում, թէ չէ հաւատում Նէրիի խելագարութեանը և դրա ստուգման համար հրաւիրում է տանը լինել, երբ ինքը գիշերը այցելութիւն կը տայ Ջինեվրային։ Նէրին գիշերը տանն է և սպասում է իր անարգողի գալստեանը։ Սակայն Ջիանէթթօյից առաջ Ջինեվրայի ննջարանի դուռը ծեծում է Գաբբրիէլլօն, որը և դաշունահար է լինում Նէրիի ձեռքով։ Գալիս է Ջիանէթթօն, և եղբայրասպանը՝ նրան տեսնելով և իրազեկ դառնալով իր գործած ոճիրին՝ խելագարվում է։

Ինչպէս տեսնում էք, «Ծաղրանքի ընթրիքը» ամբողջովին հիւսված է մռայլ արկածներից։ Մռայլ միջնադարն է ծառանում բեմի վրա, նենգութիւնը, դաւադրութիւնը և թոյն-դաշունական զարգանդն է ասպարէզ հանվում պիէսի մէջ։ Ասում են՝ պիէսը աջողութիւն է ունեցել Հռոմում և Պարիզում։ Գուցէ դա ճշմարտութիւն է։ Արդի քաղաքներում միշտ էլ կենտրոնացած է լինում արկածներով հմայվող անձանց մի խոշոր բազմութիւն։ Մենք հօ ականատես էինք, թէ մօտիկ անցեալում ինչ ախորժակով էր լափվում Նատ-Պինկերտոնեան գրականութիւնը։

Դերասանների խաղի մասին կասենք, որ Վ. Փափազեան (Ջիանէթթօ) և Զարիֆեան (Նէրի) իրանց կատարելագործված խաղով դաժան և անհրապուրիչ արկածների մի ամբողջ շարան ապրեցին բեմի վրա։ Առանձնապէս փայլում էր Զարիֆեանը, երբ խոնարհ խելագար էր ձևանում Ջիանէթթօյի առաջ։ Մի ուրիշ անգամ նա ապացուցեց, որ իրան ընտանի են հոգեկան նուրբ ապրումները։ Խորը խոցված ծերունի էր Լազեան (Թուռնքա), որին զրկել էին սիրոյ վերջին շողերից։ Լաւ բժիշկ էր Օվի Ահարոնեանը, ագէտ իր գիտնականութեան մէջ, սնոտիապաշտութեան և նախապաշարումների երկրպագու։ Տիկ. Արաքս (Ջինեվրա) հեշտանքի առարկայ լինելով՝ իր արժէքը իմացող սիրուհի էր, որի համար օտար չէին թէ Նէրիի և թէ Ջիանէթթօյի սիրային գեղումները։ Անվերապահ սիրող էր տ. Արուս-Ոսկանեան (Լիզաբէթթա)։ Անգամ մոռացված՝ նա շարունակում էր Նէրիի սիրով ջերմանալ և իր անձնազոհութեամբ հեզութեան բերաւ այդ կամակոր մարդուն։ Տիկ. Գուլազեան (Ջինթիա) ամեն ծակ ու ծուկ ճանաչող և գաղտնիքներ իմացող աղախին էր, որ գիտէր Նէրիի առջև հպատակվել մինչև ստրկացում, բայց և տիրուհու տարփածուին զգուշացնել վերահաս վտանգից։

Թատրոնում դարձեալ մարդ քիչ կար։ Դ. Ա.

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեան
Հիմնված 1880 թ.
(Պուշկին, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱՂԱՄԱՐԵԱՆ—9½—2 ժ. ներքին, ջղային և եր խայոց հիւանդութ. և ծաղկահատ.։
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—11—12 ժ. ականջի, կոկորդի, քթի հիւանդութ.։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. երկրշ. հինգշ. և շա բաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-Բ. ՏԻԳՉ ՏԷՐ-ԴԱՒԻԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբար ձութիւն և կանանց հիւ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—6—7 ժ.
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօն սիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—98

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Գիւղատնտեսական Բիւր
Գիւղատնտեսութեանը եւ կօօպերացիայի վերաբերող խորհուրդներով իրան դիմող ներին
ԳԻՒՂԱՏՆՏԵՍ
Ա. ԱԹԱՆԱՍԵԱՆ
Ընդունում է ամեն օր (բացի շաբաթ և կի րակի օրերից) առաւօտ. ժ. 8½-ից մինչ 10½-ը, երեկ. ժ. 5½-ից մինչև 7½-ը. Թիֆլիսից դուրս եղած գրաւոր դիմումներին պատասխանվում է անմիջապէս. պատաս խանի համար պէտք է ուղարկել 2 հատ 1 կօպէկանոց պօստային մարկաներ։
Հասցէն՝ Թիֆլիս, Бебутовская № 6.
(Ե. Հ. Կ.) 921. 0—7

„ՄՇԱԿԻ“ ԽՄԲԱԳՐԱՏԱՆ
ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
հետևեալ գրքերը.
1) «ՄՇԱԿ» ԵՒ ՀԱՅ ԿԻՆԸ գ. 1 ր.
2) ՀԱՄԱԼԻ ՄԱՍԼԱՀԱԹՆԻՐԸ » — 30
3) ԿԱՅԵՆԻ ՃԱՆԿԵՐՈՒՄ, դրամա 5 գ. Ալ. Առաքելեանի » — 50
4) ՔԱՌԱՍՆԱՄԵԱԿ «ՄՇԱԿԻ» («Մշակի» յոբելեանի առիթով «Տարազի» հրատարակած ալմանախ) 1
5) ԴՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ, հատոր I 1
Վերոյիշեալ հրատարակութիւններից մի օրինակ պահանջողները ճանապարհածախս չեն վճարում։
0—2

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный